

Ա. Արեւիկա
Մարտի 6/1911
1911/12

891.99

Ա-13




ՄԷԼԵՍԵՆԳԻ ԵՐԷԼԵՆ

2562

ՄԱՐՈՒՈՂ ՃՐԱԳՆԵՐ

Պրես երեք արարուածով

Տպագրութիւն երկրորդ
ՓՈՓՈԽԱԾ



НАХИЧЕВАНЬ НА ДОНУ
Пар. тип. С. Я. Авакова | ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ
Տպ. Սերովդէ Աւարգանի
1911.

НАХИЧЕВАНЬ НА ДОНУ | ՆՈՐ-ՆՈՒԶԵՒԱՆ
Пар. тип. С. Я. Авакова | Տպ. Սերոփրէ Ասազեանի
1911.

Է - .01. 2013

16670

ՆՈՒԻՐՈՒՄ Է ԻՒՐ ԱՄՈՒՄՆՈՒՆ՝

ՀՈՒՓՍԻՄԷԻՆ

ՀԵՂԻՆԱԿԸ

Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Ջ Ի Ն Ք

Ծերունի Յակոբ 65 տ. նախկին արծաթագործ.
Աննա նրա կինը ուրիշներէ համար կար անող.
Մարքա նրանց աղջիկը նոյնպէս կար անող.
Ներսէս նրանց մեծ որդին 27 տ. ծխախոտի գործա-
րանում բանող.

Սերոբ նրանց երկրորդ որդին թափառաշրջիկ.
Ալեքսանդր նրանց հարուստ հարեանի որդին.
Միկաս սափրիչ և ժողովրդական բժիշկ:

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ, ԱՌԱՋԻՆ

Բեմը ներկայացնում է անշուք մի սենեակ: Մէջտեղ մի դուռ: Աջ կողմը
երկու դուռ, որոնցից խորքէնը տանում է խոհանոց, միւսը բակ: Աջ
անկիւնում մի հատարակ չիթի վարագոյր, որի ետեւում Մարթայի անկո-
ղինը: Ձախ կողմը մի պատուհան հնամաշ չիթի վարագուրով: Պատու-
հանի առաջ մի սեղուկ՝ մէջը թէյի սպաս: Նրանից քիչ հեռու պատ-
րաստ սամովարը վրան դրած՝ մի սեղան: Մի այլ սեղանի վրայ վառած
լամպտ: Մէջտեղի դռան մօտ կախուած է ներսէսի վերաբեռն և զգակը:
Այս ու այն կողմ հատարակ փայտէ չը ներկած տաքուրեւոններ, որոնցից
մէկը վրայ նոր կարած շորեր:

Տ Ե Ս Ի Լ 1

Աննա եւ Յակոբ.

Աննա (նստած ճրագի մօտ կար է անում). Օրը լուսա-
նալու վրայ է, խոհ նա չը կայ: Ախ, Աստուած, որտեղ
մնաց նա: (Խիստ է քաղաքային զանգի վեցը). Ժամի վեցն է,
գոնէ շուտ լուսանար: (Կանչում է). Մարթա, չը կշտացա՞ր
քնից, վեր կաց:

Յակոբ. (Մանում է միջին դռնից). Երեւի դեռ նա քաղցը
քնի մէջ է, Աննա. թո՛ղ մի քիչ էլ քնի երեխան: Էս դիշեր
Ներսէսը շատ հազեց, դու լսեցի՞ր նրա ձայնը:

Աննա. Ես նրա ձայնից եմ փախել: Ո՞ր մայրը կարող
է տանել էս ցաւը: Մէկը հիւանդութեան ձեռքին է տանջ-
ւում, միւսը գիշերը տուն չի գալիս:

Յակոբ. Տեսնում ես, Աննա, ինչպէս երես տուիր էդ
անասակ զաւակին:

Աննա. Ախ, քիչ երեսատիր ինձ:

Յակոբը. Մի ասիլ, Աննա, մեղքը քեզանումն է: Երբ
ևս Աստուծոյն հետ գնում էի օտարութիւն, միշտ ասում էի
քեզ, Աննա, էս երեխան աչքիս լաւ չի երևում, լաւ հայիւր
սրան, քանի մօրք է՝ հեռու պահիր վատ ընկերներէ, թէ
չէ կը մեծանայ, յետոյ դժուար կը լինի մեղ համար: Ախր
ինչո՞ւ էիր ևս նրան ծնծելիս միշտ ճշարով մէջտեղ ընկնում
և ձեռքիցս խլում:

Աննա. Բայց չէ՞ որ Ներսէսին չէիր ծնծում, ինչո՞ւ հա-
լաւ դուրս եկաւ, Սերոբը ոչ:

Յակոբը. Ի՞նչ ևս ասում, էդպէս ևս միտքդ պահել:
Չէ՞ս յիշում, որ էն ժամանակ ամեն առաւօտ ևս նրան
հետս տանում էի արհեստանոցս [և երեկոներն էլ վերա-
դարձիս եկեղեցիէ] մինչև որ 8 տարեկան դառաւ, տուինք
արհեստի:

Աննա. Ես մեղաւոր էի, որ արհեստանոցդ հաւաքեցիր:

Յակոբը. Ի՞նչ անէի: Քաղաքը փոխուեց, կնանիքը ի-
րանց տունն ուր-նոր շուրերի, մեր շինածները գրին մի
կողմ, նոր-նոր վարպետներ դուրս եկան, հին վարպետնե-
րիս հացը կարեցին, ևս էլ ստիպուած եղայ գնալ օտարու-
թիւն:

Աննա. Եթէ դու գնացիր օտարութիւն, ևս էլ տանը
ուրիշ կանանց նման ծամոն ծամելով չէի հասած:

Յակոբը. Հա, իհարկէ, դու էլ ժամանակ չ'ունէիր:
(Չեմքերը ինքնանուր վրայ տաքնացնելով): Էդպէս է, Աննայ
ջան, անտէր-անխնամ մնացած երեխաները միշտ փչանում
են: Ո՞վ կ'ասէր, որ արծաթագործ Յակոբը Սերոբի նման
անտուակ դաւակ պէտք է ունենար: Ի՞նչ ասեմ, Աննա, կա-
րիքը մի կողմից, երեխաների էս գրութիւնը միւս կողմից
ներսս է խորովում:

Աննա. Գիշերը ցերեկ արած՝ 15 տարի է գործում ենք,
գործում, աչք ենք քոտացնում, բայց էնքան չենք կարողա-
նում վաստակել, որ գոնէ մի օր կարողանանք մի կուշտ
փորով հաց ուտել: Ժամը երեքին եմ վեր կացել:

Յակոբը. Աստուած ողորմած է, Աննա, յոյսդ մի կտրիլ,
գուցէ ես մի օր յիշի մեղ. չէ՞ որ ևս գիշեր ցերեկ աղօ-
թում եմ Նրա առաջ (Աղօթք է անում):

Աննա. Ախ, չեմ իմանում, որ մեղքներիս համար ես
էլ է խոով կացել մեր գլխին: Մեղայ Աստուծոյ:

Յակոբը. (Լսիկ): Հիւանդներին առողջութիւն, զրկուած-
ներին օգնութիւն...

Աննա. (Վեր է կենում և քաշում պատահանի վարպետը,
լուսանում է): Փառք Աստծոյ, լուսացաւ, Մարթն, Ներսէս,
վեր կացէք, աչքէն լուսացել է, օրդիւր:

Տ Ե Ս Ի Լ 2

Յակոբ, Աննա և Մարթա

Մարթա. (Վարպետի ետևից): Հայրիկ:

Աննա. Շուտ արա: (Պարագլուխ է թէյով):

Մարթա. (Վաղում ընդուն է հօր կուռը):

Աննա. Մի խանդարիլ նրան, տեսնում ես, որ մարդը
աղօթք է անում:

Մարթա. Ինձ համար էլ աղօթիւր, հայրիկ: (Յակոբ
զլիտով է անում): Ես գլխով արա:

Աննա. Շուտ արա գնա երեսդ լուսացիր: (Մարթան
գնաց խոհանոց):

Տ Ե Ս Ի Լ 3

Աննա և Յակոբ

Աննա. (Մի բանի անգամ սնդուկից հանում է բաժակներ,
հաց, շորար և այլն): Չը վերջացիր:

Յակոբը. (Երկու կողմերին զլուխ տալով): Բարի լոյս:
Դու ինձ հետ էիր, Աննա, գուցէ ուզում ես՝ օգնեմ քեզ:

Աննա. Ոչինչ հարկաւոր չի, հասիր տաքացիր:

Յակոբը. Ամեն բան տե՛ղն է. Սերոբը բան-ման չի
թացել:

Աննա. Տես կարող ես, գնա ամենքին էլ ասա, որ մեր
աղան գոչ է:

Յակոբը. (Ժպտալով): Առանց իմ ասելու էլ ճանաչում
են նրան, թէ ինչ պառւղն է: Լսիր, Աննա, երբ մենակ լի-
նենք, միտս գցիր, քեզ բան ունեմ տակու:

Աննա. Հ՞ը, ասա, էլ մի վախեցնիր:

Յակոբը. Չէ, նրա մասին չէ. ուրիշ բան է:

Տ Ե Ս Ի Լ 4

Աննա, Յակոբ և Մարթա

Մարթա. Բարի լոյս, հայրիկ. (Բռնում է նրա ձեռքը):
Տես ինչպէս ցուրտ է: Օ՛, էգ ի՞նչ է, քո ձեռքդ աւելի
սառն է:

Յակոբ. Էղպէս է աշխարհի բանը, Մարթան ջան. հի-
մայ ևս ինքս մի ձմեռն եմ:

Մարթա. Իսկ ևս ի՞նչ եմ:

Յակոբ. Դու մի նախշուն դարուն ես, դու խել որ մեր
տան դարունն ևս, մեր ուրախութիւնը:

Տ Ե Ս Ի Լ 5

Աննա, Յակոբ, Մարթա և Ներսէս

Ներսէս. (Մտնում է միջի դռնից): Բարի լոյս: (Նա խո-
սում է չոր-չոր, բայց արագ):

Յակոբ. Դու իմ սիրելիս, լաւ քնեցիր գիշերը:

Ներսէս. Գիշերը չէ, հայրիկ. բայց լոյսի վրայ շատ
լաւ: Եթէ կարելի լինէր, ես էլի մի քիչ կը քնէի... Բայց
հազը խանգարում է:

Աննա. Մարթա, թէյ շինիր նրա համար: Երեւի մըր-
սէլ ևս:

Ներսէս. Էնքան էլ տաք չէր իհարկէ:

Յակոբ. (Բռնում է նրա ձեռքը): Ոչինչ, տաք է:

Ներսէս. (Ժպտալով): Այո, հայրիկ, տաք է. ամբողջ
մարմինս տաք է, ես այրում եմ էգ տաքից (Թէյ են խմում):

Յակոբ. Յոյսդ Աստծոյ վրայ գիր, որդի, մի վախի՛ր
կ'անցնի:

Ներսէս. ես էստեղ ինձ շատ լաւ եմ զգում, բայց էն-
տեղ, էն անպիտան ծխախոտի գործարանը ինձ չի ընկնում:

Աննա. Երեւի էստեղ օդը վատ է:

Ներսէս. Հըմ, օդ. ի՞նչ օդ, էստեղ օդ չը կայ, մայրիկ:
էստեղ կայ միայն ծխախոտի ծանր, թուխաւոր հոտ և ու-
րիշ սչինչ: Շատ եմ զօռ անում, բայց չեմ կարողանում
տանել:

Աննա. Գոնէ պատուհանները բացէ՛ն:

Ներսէս. Օ՛, էգ չի կարելի, որովհետեւ տղերքը կարող
են առանց բանդերուի ծխախոտ թոցնել:

Աննա. Գոնէ փոխուէ՛ր մի ուրիշ բաժանմունք:

Ներսէս. Էգ էլ փորձեցի. խնդրեցի, որ ինձ տանեն
թղթի արկղներ շինելու բաժանմունք. բայց յետոյ ես ինքս
էլ տեսայ, որ բան չի դուրս գալ:

Աննա. Էսքան տարի ծառայում ես, ի՞նչ կը լինէր, որ
խնդիրքդ կատարէին:

Ներսէս. Բանը էգ չի մայրիկ. էս բաժնում ես ստա-
նում եմ օրական 90 կոպէկ, իսկ էստեղ ինձ շատ տան 30—
35 կոպէկ:

Աննա. Քեզ նման մեծ տղին 35 կոպէկ:

Ներսէս. Բանը մեծութեան մէջ չէ, մայրիկ: Ծխախո-
տի գործարանում ամեն գործ վարձատրւում է կամ հատով
կամ կշռով: Թղթի արկղ շինելու համար ես պէտք է նորից
աշակերա մտնեմ, այն ինչ՝ էստեղ ևս արդէն վարպետ եմ
և օրը մի քանի հազար ծխախոտ եմ շինում:

Յակոբ. Ապա ինչո՞ւ էդքան քիչ վարձ ես ստանում:

Ներսէս. Հէնց բանն էլ էգ է հայրիկ: Առաւօտունից
շատ լաւ եմ գործում. և օրեկան ես կարող էի մի ըուրլից
էլ աւել վաստակել... Բայց դէպի երեկոյ ոյժս քշանում է,
սկսում եմ թուլանալ և էլ հարբածի նման գլուխս չեմ կա-
րողանում ուտելիս վրայ ուղիղ պահել: Մտիպում եմ լի-
նում մի քիչ վաղ տուն վերադառնալ: Երեւի Սերոբը չի ե-
կել էս գիշեր:

Յակոբ. Թող կորչի նա. քիչ յիշեցէք նրա անունը:

Աննա. Մի բարկանալ, նոր աղօթք արի՛ր:

Յակոբ. Խոտով կենայ իմ աղօթքը նրա գլխին:

Ներսէս. Հարեանիդ որդուն չե՞ս տեսել, հայրիկ, լաւ
կը լինէր, էս կիրակի էլ մի քիչ գործ տար ինձ:

Յակոբ. Օ՛, պարոն Ալեքսանդրը շատ հաճանկ է քո
շինած ծխախոտը:

Ներսէս. Ես հօ նրա թամբաքուն չեմ փոխել: Մար-
թա, քո ձեռքիցդ ի՞նչ քաղցր էր թէյը: Դու չե՞ս նեղանում
մայրիկ:

Աննա. Ինչո՞ւ պիտի նեղանամ, նա էլ իմն է:

Ներսէս. Չէ՞ որ մի ժամանակ դու էիր մեր թէյ շի-
նողը: Էն ժամանակ էլ ես էսպէս հիւանդոտ էի, մայրիկ:

Աննա. էհ, ի՞նչ ես ասում, դու էհքան տոռոջ էիր, որ թոփլիկ էինք կոչում:

Յակոբ. Կարմիր էիր վարդի նման. Աստուծոյը միշտ կճմթում էր թշնգդ:

Ներսէս. Իհարկէ, որովհետեւ մայրիկի կաթով էի մեկացել: Է՛հ. էս իմ կերած խմածը ինձ մինչեւ ճաշ բաւական է. էս կտոր հացն էլ մինչեւ երեկոյ: (Մի կտոր հաց դնում է զրպանը, հօր օգնութեամբ հազնում է. մօտենում է դուրս տանող դրան): Օ՛, ինչ լաւ ձիւն է եկել: (Գնում է):

Յակոբ. Առողջութիւն տո՛ւր իմ տան սիւնին, Տէր: Մարթա. (Ինքնաեւր տանում է խոհանոց):

Տ Ե Ս Ի Լ 6

Աննա եւ Յակոբ

Աննա. (Շօրեր կտպելով կապոցի մէջ): Քիչ տորբուիր, ժամանակ չ'ունեմ: Ի՞նչ էիր ուզում ասել:

Յակոբ. Աննա, ես կամենում էի քեզ ասել, որ վարպետ Մինասը շատ լաւ տղայ է. Մարթան նրա հետ բախտաւոր կը լինի. արի՛ երեխային տանք նրան:

Աննա. Մեր գլխից մի հարուստ փեսացուն կտրուե՞լ է, ի՞նչ է: Առանց էն էլ մեր տան մէջ նա մի բախտաւոր օր չի տեսել. ի՞նչն է ստիպում մեզ վազել: Փառք Աստծոյ, մի աղջիկ ունեմ, որ գեղեցկութիւնում հաւր չը կայ:

Յակոբ. Գիտես Աննա, էդ բոլորը դու լաւ ես ասում: Ճշմարիտ է՝ վարպետ Մինասը հարուստ չէ, բայց նա շատ բարի և քրիստոնեայ տղայ է: Մի ձեռքի ջուր ունի, որ խկի չ'եղած: Պէտք է տեսնել թէ երես վերանելուս նա ձեռքը ինչպէս քնքոյշ է շարժում: Երբեմն, հաւատացիր Անոյշ ջան ես էլ եմ գայթակղում և ուզում եմ միրուքս վեր անել տամ:

Աննա. է՛դ էր պակաս:

Յակոբ. Բացի էդ մէկը, նա կարողանում է բժշկութիւններ անել: (Մօտենալով): Նա շատ երիտասարդների է բժշկում զանազան հիւանդութիւններից: Նա ասում է, քաղաքի երիտասարդների մէջ մէկն էլ չը կայ առողջ:

Աննա. Թող թէ կուզ ինչ ուզում է լինի, ես քաղցածի մէկին աղջիկ չ'ունեմ տալու:

Յակոբ. Բայց ի՞նչ մեղք է, եթէ նա քո ասած հարըստութիւնը չ'ունի: Ձէ՛ որ նա էլ մեզ նման մի մարդ է:

Աննա. Ես չեմ ասում թէ նա մեղքից վատ է: Բայց դէ սափրիչը ի՞նչ է, որ նրա ապրուստը ինչ լինի: Հիմայ տեսնում ես, որ ամենքը փողի հոսից են վազ տալիս: Քո խելքդ էն առաջուայ ժամանակներին չը գնայ: Էն վաղ էր, որ մէկի աշխատանքով տասը մարդ էր ապրում: Փառք Աստծոյ, հօ աչքիդ առաջն ենք, հօ տեսնում ես, երեք հոգի գործում ենք գործում, իսկ չորսին բաւական չի լինում:

Յակոբ. Իհարկէ:

Աննա. Էդ ի՞նչ է մեր գրութիւնը: Մին տեղ դուրս գալու համար հագուստ չ'ունենք, մի մարդ տուններս մտնի, առաջը դնելու բան չ'ունենք, Տէրը մի արասցէ, մէկներս հիւանդանայ, բժիշկի փող չ'ունենք: Սա կեանք է:

Յակոբ. Էդ մէկը ճշմարիտ է Աննա. սե օրի համար ոչինչ չ'ունենք, օր անում ենք, օր ուտում:

Աննա. Իսկ դու դեռ ասում ես տանենք երեխին մին սափրիչի տանք: Ի՞նչ օր, ի՞նչ քաղցրութիւն է գտնելու նա նրա տան: Շատ-շատ, նա էլ մեզ նման քաղցածի մէկն է էլի:

Յակոբ. Ես ոչինչ չեմ տսում Աննա. բայց քո էդ ասածներիցդ էլ ո՞վ է մեզ վրայ ուշք դարձնելու:

Աննա. Ո՞վ է իմանում. կարելի է մի բախտի դուռ էլ իմ երեխիս համար է բացուելու:

Յակոբ. Աստուած տայ Աննա, ես միշտ Նրան աղօթում եմ:

Աննա. Մտի՛կ արա, ես ուշանում եմ, հոքդ անից դուրս չը դնես, մենակ չը թողնես նրան: (Ծածուկ): Նրա մօտ բերան չ'բացես: (Ո սերին շալ քցելով, կապոցը դրեց գլխին ու գնաց աջ դռնով):

Տ Ե Ս Ի Լ 7

Յակոբ եւ Մարթա

Մարթա. (Մանում է խոհանոցից և արագ արագ թէյի սպասը հաւաքում և դարձում սեղանի մէջ): Էդ լճն էիք քըշփշում մայրիկի հետ:

Յակոբ. Ոչինչ սիրելիս:

Մարթա. Ինձ խաբել չես կարող:

Յակոբ. Դու բարկացած ես իմ վրայ:

Մարթա. Իհարկէ ոչ:

Յակոբ. Ապա լճն էս ուզում ասել:

Մարթա. Այն, որ ինչ որ մտքումդ գրել ես, հանիր:

Յակոբ. Ի՞նչ ասացիր:

Մարթա. Այո, հանիր և դէն քցիր, աւելորդ է:

Յակոբ. Բայց դու հօ գիտես, որ ես միմիայն քո բախտաւորութեան մասին եմ մտածում:

Մարթա. Հարկաւոր չի: Խնդրում եմ հայրիկ. թող էդ բանը: Բախտաւորութիւնը մեզ համար չի գրված:

Յակոբ. Բայց դու դեռ լսիր ինչ եմ ասում: Դու ճանաչում ես սափրիչ Մինասին:

Մարթա. Ձեռն ճանաչում եմ անունն էլ չեմ ուզում լսել:

Յակոբ. Դէ լաւ: Խաղաղվիր: Ձեռն ուզում մի ուզիր: Աւելի լաւ է, գնամ տեսնեմ որտեղ է մնացել էս գիշիր հղբայրդ:

Մարթա. Լաւ մտիկ արա, ինձ մենակ ես թողնում. յետոյ մայրիկի ձեռքից չես պրծնիր:

Յակոբ. Բայց ես խելոյն կը վերադառնամ. նայիր, յետոյ նրան չ'յայտնես սիրելիս: (Դնում է մուտքի դռնով):

Մարթա. (Դռնից դուրս նայելով): Ախ Աստուած, էլի նա է: (Փախչում նստում է և սկսում կար անել):

Տ Ե Ս Ի Լ 8

Մարթա եւ Ալեքսանդր.

Ալեքս. (Մանում է մուտքի դռնից 2 արկղներ ձեռին): Ոսկի հարեանուհի, կարելի է շաբաթ է տուն էք հաւաքում, ես ձեզ կը խանգարեմ:

Մարթա. Ոչ. մենք երեկոյեան ենք տուն հաւաքում: Համեցէք:

Ալեքս. Այդ լճն է. ցերեկով ճրագ: (Այդ սեղանի վրայ է դնում արկղերը):

Մարթա. Սենեակը տաքացնելու համար է:

Ալեքս. Ոչ ոք չը կ'ա:

Մարթա. Ոչ:

Ալեքս. (Մօտենալով): Ձեռք չե՞ս տալիս. (Ձեռք են տալիս): Շատ ես վատտակում կար անելով:

Մարթա. Էնքան, որ ապրում ենք:

Ալեքս. Քեզ համար ես կարում:

Մարթա. Ոչ, ուրիշի համար:

Ալեքս. Բայց մի ձեռք շքեղ զգեստ քեզ ինչպէս կը սաղէր: Դու չե՞ս նեղանալ, եթէ ես քեզ համար մի շորացու ընծայ բերեմ.

Մարթա. Էդ լճն էս բան է: Ինչո՞ւ համար դուք ինձ համար շորացու առնէք:

Ալեքս. Ի՞նչ բան է որ: Այնքան այդպէս անողներ կան: Ի՞նչ գոյն ես սիրում:

Մարթա. Ես ոչինչ չեմ ուզում: Շնորհակալ եմ:

Ալեքս. Ի՞նչ է նշանակում անփորձութիւն:

Մարթա. Ես հօ չեմ կարող ծածուկ պահել, միևնոյնն է կ'իմանան:

Ալեքս. Իոկ մենք այդ բանը հօ ծածուկ չենք անի: Մի օր... այ երբ որբոցն Աննայի և Մարթայի տօնը կը լինի, ես կը մտնեմ և կը շնորհաւորեմ ձեր տօնը:

Մարթա. Ոչ. իսէր Աստուծոյ ոչինչ հարկաւոր չէ: Ինչպէս երևում է դուք դեռ չէք ճանաչում իմ հղբօրը:

Ալեքս. Որի՞ն, էն միւսի՞ն: Էհ. նրա նմաններին բաւական է մի երկու բուրդի գինու փող տաս, և նրանք իրանց ծնողներին էլ կը ծախեն:

Մարթա. Ախ Աստուած մի արասցէ նա էդ բաները լսի: Աւելի լաւ է, ուրիշ բաներ խօսեցէք: Ծխախոտներդ վերջացել է:

Ալեքս. Ես չեմ ծխում:

Մարթա. Ձէք ծխում: Ապա ինչո՞ւ էք եղբօրս ծխախոտ չինել տալիս:

Ալեքս. Ասում եմ հարեանիս որդին է, գործ տամ:

Մարթա. Երևի դուք վախենում էք ծնողներից, որ չէք ծխում:

Ալեքս. Ես նրանց միակ որդին եմ. նրանք հրեք չեն համարձակում կաշի իմ քէֆին: Ես ապրում եմ իմ զուարճութեանս համար: Ձեռն ուղիղ մի անգամ քեզ ինձ հետ ցիրկ տանեմ:

Մարթա. Ի՞նչ էք ասում: Ինձ ո՞վ կը թողնի, որ ես ոտքս տնից դուրս դնեմ:

Ալեքս. Բայց միթէ հիմայ հին ժամանակներն է: Հիմայ աղջիկն էլ պէտք է ազատ լինի, ինչպէ՞ս և աղամարդը:

Մարթա. Ձեզ համար իհարկէ էսպէս է. դուք ազատ էք:

Ալեքս. Իմ ազատութիւնը իմ գոյութիւններն են: Դու չե՞ս հարցնում, թէ ի՞նչն է ստիպում ինձ գոյութիւններ անել:

Մարթա. Ասացէք էլի:

Ելեքս. Դու կարծում ես հեշտ է ասելը:

Մարթա. Դժուար է:

Ալեքս. Այ դու ինքդ ասա: Այս մարդը չի ծխում. ի՞նչ գործ ունի նա մեր տան, ի՞նչ ոյժ է քաշում նրան այստեղ: Տեսնում ես. դու այդ գիտես, բայց չես ասիլ: Իմ սրտիս մէջ էլ շատ բան կայ քեզ ասելու: Բայց չեմ կարողանում: Տանջում եմ, համբերութիւնս կտրուէ... Գալիս է լիզելու ծայրին կանգնում, և այնուհետեւ ես համրի նման մնում եմ լեզուս կապուած: Տեսնում եմ մի բան, հիանում եմ նրանով. նայում եմ նրա պատկերին և չեմ կշտանում: Եւ որովհետեւ լեզուս կապում է, ես սկսում եմ գոյութիւններ անել և հարբել:

Մարթա. Ի՞նչ բաներ էք ասում. մինչև անգամ հարում էլ էք:

Ալեքս. Ինչո՞ւ համար ես զարմանում: Հեշտ է, որ ինձ նման երիտասարդը մի սրտի ընկեր չ'ունենայ:

Մարթա. Բայց կարծեմ ասացիք «կայ մի բան որով հիանում էք»:

Ալեքս. Այո, կայ:

Մարթա. Իսկ ի՞նչ է նա:

Ալեքս. Այդ դու ինքդ էլ գիտես: Եթէ իմ ոսկի հարեանուհեւ հետաքրքրում է այդ բանը, ապա ես նրա առջ կը բացեմ իմ սիրտը:

Մարթա. Բացեցէք էլի, ո՞վ է խանգարում:

Ալեքս. Բացե՞մ: Դու ինձից չե՞ս նեղանալ, եթէ ես քեզ մի ճշմարիտ բան ասեմ:

Մարթա. Ճշմարիտ բանից ինչո՞ւ պիտի նեղանամ:

Ալեքս. Իմ թանգագին Մարթա, ես քեզ սիրում եմ:

Մարթա. Ի՞նչ ասացիք:

Ալեքս. Դու չէ՞ր սպասում:

Մարթա. Այո, ես չէի սպասում, որ դուք կկիւ էք մեզ ծաղրելու:

Ալեքս. Ծաղրելով. քեզ նման գեղեցիկ արարածին ծաղրելով:

Մարթա. Իհարկէ: Միթէ կարելի է հաւատալ:

Ալեքս. Փորձե՛ք ես ինձ, որ չը հաւատաս:

Մարթա. Ի՞նչ փորձել:

Ալեքս. Իհարկէ, քո աչքում մի սափրիչ Մինաս աւելի լաւ է, քան թէ ես: Ձէ՞ որ հայրդ նրան երկինք է բարձրացնում:

Մարթա. Ի՞նչ էք ասում. ես բան չեմ հասկանում:

Ալեքս. Վնաս չ'ունի: Գնա՛ն նրան: Հ'մ, շատ լաւ տարուստ, բախտաւորութիւն և պատիւ է սպասում քեզ նրա տանը: Կիրակի առաւօտները նրա գլխին ջուր կ'ածես, ոտները կը լուանաս, շորերը կը լուանաս... մի խօսքով, ի՞նչ խօսք, որ սրանից հաղար անգամ լաւ կ'ապրես:

Մարթա. Դուք շատ բան ասացիք, իսկ ես ոչինչ չը հասկացայ:

Ալեքս. Իհարկէ չ'հասկանալու գիր քեզ: Սճառ է, որ քեզ սափրիչ Մինասին են տալու:

Մարթա. Եթէ ուզուողը ես եմ, ես բան չեմ իմանում:

Ալեքս. Իսկ եթէ քեզ հարցնէին մեր երկուսից որի՞ն ես աւելի հաւանում, ի՞նչ կը պատասխանէիր:

Մարթա. Ես ոչինչ չը գիտեմ, ես կը հարցնեմ իմ մօրս:

Ալեքս. (Կողմ): Սա բոլորովին երեխայ է: Բայց չէ որ մինչ մեր ծնողները մենք պէտք է իրար հետ ծանօթ լինենք, իրար հետ ծածուկ տեսութիւններ անենք: Մենք հօ ժամանակից յետ մնալ չինք կարող: Այ, եթէ դու ինձ սիրէիր, ես քեզ կ'առէի թէ ինչ պէտք է անենք: Սիրում ես ինձ:

Մարթա. Ասացէք էլի:

Ալեքս. Մարթա. խօսք տո՛ւր, որ երբ կը լսես իմ ձայնը, կը գաս ինձ հետ ծածուկ տեսութեան: Ախ աշխտեղ ես կը բացեմ իմ լեզուն, աշխտեղ դու կ'իմանաս թէ ինչքան եմ տանջուել քո սիրով:

Մարթա. Յետոյ, յետոյ:

Ալեքս. Խօսք տո՛ւր, որ կը մերժես այդ սափրիչին: Թէ չէ երգում եմ քո սիրով, այդ նրան էժան չի նստի, ես նրան կ'ոչնչացնեմ:

Մարթա. Լաւ, լաւ, բաւական է, խօսք եմ տալիս:

Տ Ե Ս Ի Լ 9

Ալեքսանդր, Մարթա եւ Յակոբ

Յակոբ. (Մտնում է մուտքի դռնից): Ախ, պարոն Ալեքսանդր էդ դժւը էք: Երեւի ծխախոտների վերջացել է:

Ալեքս. Այո. թող վարպետ Ներսէսը ինձ համար վաղը ծխախոտ պատրաստի:

Յակոբ. Շատ լաւ: Վերջացնի ես կը բերեմ:

Ալեքս. Ի՞նչ հարկաւոր է ձեզ նեղութիւն տալ, վարպետ Յակոբ, ես ինքս կը գամ,

Յակոբ. Աստուած օրհնի ձեզ, ձեր բարութեան փոխարէն, որդի:

Ալեքս. Միւս արկղն էլ կանֆետներ են օրիորդ Մարթայի համար: Մնաց բարեւ: (Գնաց աջ):

Յակոբ. Գնաց բարեւ: Տեսնում ես Մարթա. բարի մարդիկ պակաս չեն աշխարհում:

Տ Ե Ս Ի Լ 10

Յակոբ, եւ Մարթա

Յակոբ. Շաղթ ուսերիդ զցիր, Մարթա:

Մարթա. Ինձ համար տաք է. ես չեմ մրսում: (Կարում է):

Յակոբ. Իսկ ես տաճնց վերադառնալի մրսում եմ: Կ'ուզե՞ս Մարթա, քանի մայրդ տանը չէ, ես քեզ համար կարգում Բանին Աստծոյ խօսքը:

Մարթա. Կարգն:

Յակոբ. Իմ թանկագին Մարթա. ես քեզ շատ եմ սիրում. դու սիրում ես ինձ ականջ դնել:

Մարթա. Հէնց դրան համար ես սիրում:

Յակոբ. Ձէ հոգիս. և նրան համար, որ դու էլ էս տան աշխատողներից մէկն ես: Գուցէ էս ամառը ես էլ կարողանամ մի գործի կաշէլ: Ձեմ հասկանում, ինչո՞ւ ես քան թոյլ:

Մարթա. Երեւի շատ ես չարչարուել կեանքումդ:

Յակոբ. Էնքան: Մի անգամ ձիախառն գետն է բշկի ինձ, մի անգամ էլ Ասատուրի հետ ձիւնի տակ եմ գիշերել:

Մարթա. Աւելի լաւ է էդպէս բաներ պատմես հայրիկ. թէ չէ կարդացածիցդ ես ոչինչ չեմ հասկանում:

Յակոբ. Ասենք ես էլ էնքան չեմ հասկանում: Պէտք է ասել շատ խրթին են գրում: Օրինակ մի տեղ ասուած է, «Դշխոյն հարաւու. յարիցէ յաւուրն դատաստանի». բայց ես չեմ հասկանում էդ դշխոները ինչ գործ ունեն սրա մէջ: Իսկ էստեղ (ցոյց է տալիս գիրքը) պարզ ասուած է «Սառուղ Սառուղ, զի՞ հալածես զիս»: Շատ քաղցր խօսքեր են Մարթա: Իսկ դու ինչո՞ւ չես մէջքդ ծածկում, դու կարող ես մրսել: Ո՞ւր է շաղթ. երեւի անզգամն է տարել: Իսկ դուք ինձանից ծածկում էք: Սպասէք, ես կը յայտնեմ պալիցիային, թէ չէ նա մեզ բոլորովին կը քանդի:

Մարթա. Մի բարկանալ հայրիկ: Ապա դու ասում էիր, որ սիրում ես քաջ մարդկանց. չէ որ Սերոբն էլ քաջ է:

Յակոբ. Բայց իմ ինչի՞ն է պէտք նրա քաջութիւնը: Քաջ է, թող նա իր քաջութիւնը տանի մի ուրիշ լաւ բանի մէջ ցոյց տայ, և ոչ թէ մեզ պէս զրկուածի վերջին պա-

15
1001

տառը գողանայ: (Վերկենալով): Ախ փչացած, ախ անդգամ,
ես քեզ ցոյց կը տամ:

Տ Ե Ս Ի Լ 11

Յակոբ, Մարթա եւ Սերոր

Սերոր. (Աջ դռնից շալը ուտելին մատու), Կէցցէ հայրիկ,
կէցցէ: Տաք-տաք խօսիր, որ չը մըսես, թէ չէ դըստում փա-
փուկ ցուրտ է:

Յակոբ. Ինչո՞ւ ես նրա շալը վերցրել. ա՞նձ էս բո-
ւէլիս, ա՞նձը ասում եմ:

Սերոր. (Հրկիւզ նրան): Սպասիր ծերուկ: Դու տեսնում
ես, որ ես խղճացել եմ նրան եւ յետ բերել. (Շալը պցում է
Մարթայի վրայ):

Յակոբ. Մարթա, դու տեսնո՞ւ. նա ինձ վրայ ձեռք
բարձրացրուց:

Մարթա. Ինչպէ՞ս ես համարձակում հայրիկի վրայ
ձեռք բարձրացնել:

Սերոր. Ոչինչ, նա ճիւղոտի առկ ինձ շատ է ճղճղաց-
րիկ: Ինչպէ՞ս է. տեսնո՞ւ ես: Բանը որ ոյժի ընկաւ ինձ
ոչինչ չես կարող անել: Ձե՞ս իմանում, որ պառաւը երե-
խայացել է, իսկ երեխան (Կրծքին խրկելով) տղամարդ է
դառել:

Յակոբ. Մի պարծենալ կրծքովդ. քեզնից պակաս տղա-
մարդ չեմ եղել ես: Հարցրո՞ւ Աստուծոյն: Պարծեցիր մի
լսու բանով: Աւելի լաւ է ամաչես տափը մտնո՞ւ: Ո՞վ է
տեսել, որ քեզ նման տղամարդը անգործ թափառի:

Սերոր. Ինչո՞ւ ուսում չը տուիր, որ ես էլ խելօք տղայ
դուրս գայի:

Յակոբ. Մի՞թէ ամենքը ուսում ունեն: Մի՞թէ Ներսէսը
ուսում ունի: Գոնէ մի ձիու չափ էլ չը կտաս: Ձին բանում
է եւ ուսում, իսկ դո՞ւ:

Սերոր. Ա՜. ուրեմն դու ուզում ես, որ ես մի ձի դառ-
նամ:

Յակոբ. Ուզում եմ, որ մարդ դառնաս:

Սերոր. Պարզ ասա, կ'ուզէիր ինձնից լո՞ւնջ լինէր քեզ
համար:

Յակոբ. Ես ինձ համար չեմ ասում, այլ քեզ համար:
Միենոյն է մենք վաղը միւս օրը գերեզման ենք մտնելու,
ո՞վ պէտք է վառ պահի մեր տան կրակը, (յուզուած) էս
մարուող ճրագը:

Սերոր. Դու կարծում ես իմ նմանները նամուս չ'ու-
նե՞ն, ոչինչ չ'են մտածում:

Յակոբ. Ասա ինձ լո՞ւնջ են մտածում նրանք:

Սերոր. Բայց դուք կարծում էք, որ եթէ ես էլ Ներ-
սէսի պէս մի կտոր ցամաք հացի համար զնայի մի թամ-
բաքուի Փարրիկում ոսկու փթեցնէի, կեանք մաշեցնէի, ես
էլ լաւ մարդ կը դառնայի: Բայց էդ սխալ է:

Յակոբ. Ես հօ քեզ անպատճառ թամբաքուի գործա-
ւան չեմ ասում:

Սերոր. Բայց չ'է որ, ո՞ւր էլ գնաս, ինչ որ էլ անես,
էլի մի կտոր հացի համար ես անելու: Վերջապէս չ'է որ
քո ասած էդ ձիւ եւ մարդի մէջ մի դանաղանութիւն պէտք
է լինի:

Յակոբ. Յետո՞յ:

Սերոր. Յետոյ էն, որ դու ուզում ես, ես մի ձի դառ-
նամ, իսկ ես էդ բանը չեմ կարող:

Յակոբ. Ուրեմն մենք որ բան ենք անում մարդ չենք:

Սերոր. Հէնց բանն էլ էդ է, որ մարդ ենք, բայց մի-
մեանց նման չենք: Սրա համար էլ դու Բանին Աստծոյ
խօսքի մէջ ես հանգստութիւն գտնում. մէկը ձիու նման
բան անելի մէջ, իսկ ես մի ռարիշ բանի մէջ:

Յակոբ. Իսկ դու պարզ ասա, շարլատանութեան մէջ:

Սերոր. Վնաս չ'ունի. թող քո ասածդ լինի: Ձե՞ս ու-
զում շարլատաններ լինեն, փոխի կեանքը: Թող ամենքը
ձի դառնան, աչքիս վրայ, ես էլ ձի կը դառնամ: Բայց որ
ես ձի դառնամ ուրիշները իմ մէջքին նստելու համար, էդ
մէկը ներքս, ես չեմ կարող:

Յակոբ. Բայց մի՞թէ մենք կարող ենք կեանքը փոխել:
Ամեն ինչ նրա ձեռքին է, նա է անօրինում մեր վիճակը:

Սերոր. Սուտ է: Նա ոչինչ բանից տեղեկութիւն չ'ունի:
Մենք ինքներս ենք ամեն բան մեր սրտի ուղածի պէս
ծռում:

Յակոբ. Ծռում, մե՞նք: Մարթա, լսում ես ինչպէս նա
մեղանչում է:

Սերորը. Այ, դուք ամենքդ էլ էդպէս էք: Երբ մարդս ուզում է մի ճշմարիտ բան անել, ծուռը ուզելը, դուք խակոյն ձայներդ գլխներդ էք պցում թէ «շարլատան է նա, խառնակիչ է նա»: Բայց չէ՞ որ պէտք է մի նրան էլ լսել, թէ ինչո՞ւ է նա էդպէս:

Յակոբ. Ի՞նչ ասեմ: (Մարի գնալով): Ինձ թւում է թէ քո ասածներդ մէջ միտք կայ, թւում է որ և դատարկ խօսքեր են:

Սերորը. Իսկ ինչ որ քեզ թւում է միայն, ինձ համար պարզ է Ասածոյ լոյսի պէս:

Յակոբ. Ես միայն մի բան կ'ուզէի, աղօթելով դարձնէիր քնից, առաւօտից մինչև երեկոյ քրախնք թափէիր, և անկողին մտնելիւր աղօթելուց յետոյ, որպէսզի իմանայիր ինչի մէջն է կեանքի բաղցրութիւնը:

Սերորը. Հնացած բաներ... Ես քեզ ասում եմ չեմ կարող, չեմ կարող:

Յակոբ. Փուչ անպիտան. դու միայն էն կարող ես, որ տան մէջ ոչինչ չես թողնում, ամեն ինչ գողնում ես: Սպասիր տես ես ինչպէս կը յայտնեմ պալիցիակահներին:

Սերորը. Ի դուր նեղութիւն կը քաշես. նրանք առանց քո ասելու էլ ինձ լաւ են ճանաչում:

Մարթա. Որտեղից են ճանաչում, ապեր:

Սերորը. Ոչինչ, մի քանի զիշեր նրանց մօտ հիւր եմ եղել հրաւիրուած: Աւելի լաւ է Բանին Ասածոյ խօսքերից կարգն, ականջ դնենք:

Յակոբ. Եթէ դու ուզում ես Ասածոյ ճանապարհին գալ, ես կը կարգամ:

Սերորը. (Մինչ Յակոբ գիրքը կը թերթի): Չայ խմել վերջացրել էք:

Մարթա. Նոր հաւաքեցինք:

Սերորը. Մայրիկը տանը չէ՞:

Մարթա. Ծորեր է տարել: Որտեղ ես եղել զիշերը ապեր:

Սերորը. Գարմոն շինող Գաւրուշի խանութի ետեում: Պէտք է ասել էստեղ էլ շատ տաք չէր: Հայ, յետոյ հայրիկ Կուռնելիոս հարիւրապետը գնաց Երուսաղէմ... (Մտնում է վարդոյրի ետեւ):

Յակոբ. Մի մտնիլ էստեղ:

Մարթա. (Ծածուկ): Մի վախիլ, էստեղ ոչինչ չը կայ: Յակոբ. Դուքս եկ էստեղից: (Յարձակում է վրան, վարպոյրի ետեւում երեւում է, որ իրար հըռում են): Դու իրաւունք չ'ունես:

Սերորը. Ա՛, թող տեսնեմ, ես հաց եմ ուզում: (Երեւում է ինչպէս զցեց մի կողմ բարձր):

Յակոբ. Հեռու ասում եմ:

Սերորը. Ես քաղցած եմ, լսում ես:

Մարթա. Էստեղ հաց չը կայ:

Սերորը. (Գուրս դալով): Որտեղ է հացը:

Յակոբ. (Նոյնպէս): Քեզ հաց չը կայ: (Նստում է սընդուկի վրայ): Կարող ես գնալ ինքդ աշխատել և ուտել:

Սերորը. Իսկ... քեզ... կայ:

Յակոբ. Դու ճշմարիտ ես ասում: Բայց չէ՞ որ մի ժամանակ ձեզ ամենքիդ ես էի պահում:

Սերորը. Վնաս չունի. էսօր ես ծոմ կ'աւհեմ: Դէ կարգն:

Յակոբ. Ես ոչինչ չեմ կարգալ:

Մարթա. Հայրիկ. խնդրում եմ. վեր կաց. թող հառաւի իմ բաժինը:

Յակոբ. (Զգացված): Զեռքս կ'ոշտուկները դեռ նոր են վափկել, իսկ հա ինձ մի աւելորդ բռն է համարում: Տէրը իրան կղիցի, թող ուտի: (Վեր է կենում և շրջվում մի կողմ):

Սերորը. Ուրեմն էստեղ է ամեն ինչ: Լաւ խելք էք բանեցրել ես ու իմ Աստուածը: (Մի կտոր բան քցում է բերանը և ծածկում սնդուկը): Նստի՛ր ձերուկ: Սա ինձ բաւական է: (Մարթային ծածուկ): Բարձիդ տակին ոչինչ չ'կար. ո՞ւր են փողերդ:

Մարթա. Ես փող չունեմ ապեր:

Սերորը. Սուտ ես ասում. փող տուր, թէ չէ ամեն ինչ կ'իշխեմ տակն ու վրայ կ'անեմ:

Մարթա. Ի՞նչ ես անելու փողը:

Սերորը. Էս երեկոյ Գավրուշի մօտ մեծ խաղ կայ:

Մարթա. Թող էդ բանը. քո վարմունքով դու կ'սպանես սրանց:

Սերորը. Խրատը քեզ համար պահիր Մարթա. շուտ արա:

Մարթա. Ես ոչինչ չունեմ ապեր:

Սերորը. Ա՛, մի՛ երկարացնել: Ասում եմ քեզ շուտ արա:
Մարթա. (Գրպանից հանում է թաշկինակ բշկաժ, որը
ուզում է բացել): Կէսը քեզ, կէսը ինձ:

Սերորը. Դէս տո՛ւր ասում եմ:

Մարթա. Հայրիկ, ա՛...

Յակոբը. Ձեռքի՛ տալ հրա՛ն գաղա՛ն:

Սերորը. Ա՛... Բայ թող: (Խլում է և ուզում է վախճել):

Յակոբը. Չ'համարձակվե՛ս... լի՛րբ անդգամ... (Բռնում է
նրան):

Սերորը. Հեռացի՛ր: (Հըում է. Յակոբը ընկնում է, նա վախ-
շում է մուտքի դռնով):

Մարթա. (ձշում է)... Հայրիկ... հայրիկ:

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ, ԵՐԿՐՈՐԴ

Բեմը ներկայացնում է Յակոբի բնակարանի բակը: Աջ կողմ տնակ իր
դռնով: Մէջտեղ նեղ դռնով տախտակի մի պատ, որի ետև պարտէզ:
Մէջտեղ մի մեծ ծառ, որի տակ սեղան և նոյն աթոռները: Ձախ կողմ
ծառերով տարածութիւն: Աջ կողմ տան մօտ ջրհոր և դոյլ թոկով:
Գարուն է:

Տ Ե Ս Ի Լ 1

Մարթա եւ Ալեքսանդր

Մարթա. Երեի դու ուրիշների մօտ մի բան ասել ես:
Ալեքս. Մթթէ կարելի է այսպիսի բաները ուրիշներին
պատմել:

Մարթա. Ապա ինչո՞ւ են ինձ սկսել կասկածով մտիկ
անել:

Ալեքս. Այդ քո՛ երկչոտ հրեականութիւնդ է Մարթա:
Դու հօ ինձ հաւատում ես:

Մարթա. Իհարկէ, բայց մինչև ե՞րբ պէտք է էսպէս
շարունակուի:

Ալեքս. Ես զարմանում եմ, էլ ի՞նչ ես ուզում, ես քեզ
եմ սիրում, դու ինձ:

Մարթա. Դու ասացիր մօրդ կ'ասես, ի՞նչ հղաւ, ինչո՞ւ
ես ուշացնում:

Ալեքս. Ի՞նչ է պատահել քեզ, որ այդքան շտապում
ես: Մօր առաջ երես բացելը հե՞շտ ես իմանում:

Մարթա. Ապա ես ի՞նչ պիտի անեմ, եթէ իմ մայրս
իմանայ:

Ալեքս. Եթէ դու չ'ասես, որտե՞ղից պիտի իմանայ:

Մարթա. Վերջը մի օր բացուելու է էլի. հօ էդպէս չի ֆնարու:

Ալեքս. էհ մի վախիլ Մարթա, բացուելուց յետոյ հեշտ է. գիտէս ինչ. եթէ բանը միայն մայրս լինէր, ոչինչ: Բայց ես անպիտան հօրիցս եմ վախենում. ախ ինչո՞ւ մի կաթուած չէ խփում, որ տեղն ու տեղը սպանի նրան:

Մարթա. Ինչե՞ր ես ասում դու քո հօր մասին:

Ալեքս. Ախ Մարթա, այն ժամանակ եթէ մայրս չ'ուզի էլ, ես քեզ կը փախցնեմ:

Մարթա. Դու բոլորովին փոխուել ես. դու էլ առաջուանը չես:

Ալեքս. էհ, ճանաչում եմ կանանց: Դուք բոլորդ էլ այդպէս էք. մի ամիս, երկու ամիս, և յետոյ տղամարդը ձեզ համար փոխուած է: Մի հարցնող լինի լո՞ւնչն է իմ մէջ փոխուել:

Մարթա. Բայց չէ՞ որ առաջ դու էդպէս չէիր խօսում: Ձե՞ որ դու ամեն բան վճռել էիր իսկոյն կատարել:

Ալեքս. Ի՞նչ անեմ, քո կարծիքով գնամ նրանց առաջ ամեն բան պարզ ասեմ, որ քո պատճառաւ լո՞ւնձ էլ տնից դուրս գցեն:

Մարթա. Ապա ինչո՞ւ դու ասում էիր քո գլխի վրայ տէր չը կայ, և որ դու ապրում ես միայն քո զուարճութիւնների համար:

Ալեքս. Իհարկէ, եթէ ես մի անխելք բան չ'անեմ, միշտ կ'ապրեմ իմ զուարճութիւնների համար:

Մարթա. Ես հասկանում եմ. իհարկէ նրանք կ'ուզեն, որ դու մի հարուստ աղջիկ ուզես:

Ալեքս. Այ, տեսնում ես. դու այդ գիտես, բայց ասում ես, շտապիր: (Մարթան լալիս է): Ինչո՞ւ ես լաց լինում:

Մարթա. Հիմա՞յ ես բոլորը հասկացայ: Ես չեմ կարող... դու ինձ խաբում ես, ես այդ տեսնում եմ և ես ամեն բան կ'ասեմ իմ մօրս:

Նլեքս. Խելքդ զլուխդ հաւաքիր Մարթա:

Մարթա. Ինչ ուզում է թո՞ղ լինի...:

Ալեքս. Մարթա, հաւատացիր դու դեռ անխորձ ես: Դեռ ժամանակ շատ կայ, սրբիւր աչքերդ, թէ չէ կը տեսնեն: Էհ: (Գնում է ձախ կողմ):

Տ Ե Ս Ի Լ 2

Մարթա եւ Աննա

Աննա. (Մտնում է միջի դռնից կապոց ձեռին): Էդ լո՞ւնչ էր, հը՞, ասան, էդ լո՞ւնչ էր: Դու լաց ես լինում:

Մարթա. Ո՞վ է լաց լինում. ես հէնց էնպէս:

Աննա. Նա լո՞ւնչ բան ունէր քեզ հետ:

Մարթա. Ես լո՞ւնչ գիտեմ:

Աննա. Լաւ է եթէ ոչինչ չես իմացել. բայց Աստուած մի արասցէ մի բան պատահած լինի: Ծուռ արան ասան ինձ. սիրտս կը ճաքի եթէ չ'իմանամ ինչ է պատահել:

Մարթա. Նա ինձ սիրում է:

Աննա. Նա քեզ սիրում է:

Մարթա. Նա էդպէս է ասում:

Աննա. Ապա էլ էդ արտասուքդ լո՞ւնչ է նշանակում:

Մարթա. Ոչինչ:

Աննա. Մարթա, աչքիս լաւ մտիկ արան: Ես երեխայ չեմ, էստեղ մի բան կայ, որ դու ինձնից թագցնում ես:

Մարթա. Հաւատացիր ոչինչ չը կայ. նա խոստացել էր իմ վրայ պսակուել:

Աննա. Խոստացել էր: Ապա ինչո՞ւ նշան չի բերում. մենք ոչինչ ընդդէմ չ'ունենք:

Մարթա. Նա վախենում է ծնողներից:

Աննա. Տղամարդը վախենում է ծնողներից. իսկ դու. իհարկէ դու էլ ինչպէս աղջիկամարմատ, ասած կը լինես նրան, որ դու էլ ծնողներ ունես, որ նրանց կ'հարցնես... Ես քեզ եմ հարցնում Մարթա:

Մարթա. Օխ, միք տանջիլ ինձ:

Աննա. Մարթա, Աստուած մի արասցէ դու խաբուած լինես, ես կրակ կը բռնեմ և տեղովս-մէկ կ'այրուեմ:

Մարթա. Ի՞նչ անեմ:

Աննա. Աչքերդ լաւ բացիր սիրելիս: Դիշեր ցերեկ աշտատութեան ձեռքին քեզ համար ենք չարչարում: Աչքս մենակ քեզ է տեսնում. այս տան բախուր դու պէտք է բացես. դու հօ ամենքիս տեսնում ես. եթէ քեզ էլ մի բան պատահի, էլ էն ժամանակ աւելի լաւ է մի քար կապիմ էս չորացած կուրծքիս ու ջուրը գցեմ ինձ խեղդեմ:

Մարթա. Ինչո՞ւ ես ինձ վախեցնում:

Աննա. ես ուզում եմ քո անքիւ բացեմ, իսկ դու տնակում ես ես քեզ վախեցնում եմ:

Մարթա. Ի՞նչ մեղք, եթէ նա երդում է, որ ինձ սիրում է:

Աննա. Իսկ դո՞ւ:

Մարթա. Ինչո՞ւ ես բարկանում:

Աննա. Ուրեմն դու հաւատացել ես նրա սուտ երդումներին:

Մարթա. Ի՞նչ ես ուզում ինձնից:

Աննա. Բոլորս ընկնէր մարմնիդ մէջ, այ թէ ինչ եմ ուզում:

Տ Ե Ս Ի Լ 3

Մարթա, Աննա եւ Յակոբ

Յակոբ. (Մտնում է աջ դռնից): Ա՛, դուք էստեղ էք: Ինչ Աստծոյ օրհնած բանն է զարուհւր: Ես ինձ էնպէս եմ զգում, կարծես թէ նորից 30 տարեկան եմ դառել: Դեռ ամառը աւելի լաւ է: Փորձեմ մէկ ջուր քաշեմ: (Ջուր է քաշում):

Աննա. (Ցած): Թո՛ղ կրակ մաղուի իմ սպիտակած գլուխին. թո՛ղ պատուի գետինը և կուլ տայ մեզ ամենքիս: Սրա համար էր նա էգբան քսքսում, սրա համար էր նա բարեբար ձկանում: Ես նրան ցոյց կը տամ:

Յակոբ. (Քաշից): Ահա, տես՞ք: Ձէ, հաւատացէ՛ք էս ամառը ես անպատճառ մի գործի պէտք է մտնեմ: Մինչև ես մի գործի չը մտնեմ, Ներսէս չի կարող հանգստանալ: Բաշց դուք ինչո՞ւ էք փոխում: Մարթա, Աննա, ի՞նչ է պատահել, ասացէ՛ք ինձ: (Փողոցի դուռը ծեծում են): Էդ ի՞նչ է. փողոցի դուռը հօ բաց է: Գնամ տեսնեմ ո՞վ է ծեծողը: (Գնաց միջի դռնով):

Տ Ե Ս Ի Լ 4

Մարթա եւ Աննա

Աննա. Ի՞նչ պատասխան տամ էս խեղճին, դեռ ի՞նչ պէտք է պատասխանեմ էն միւսնեքին: Լաւ սեպրեր օրներս:

Մարթա. Օ՛, մի սպանէ՛ք ինձ:

Աննա. Կորի՛ր աչքիցս անզգամ. էլ այսուհետեւ չը համարձակուես ոտքդ տանից դուրս դնել: Տեսնում եմ, — ամօթ պատկառանքը ոտքի տակ ես տուել, էլ քեզ տանը պահել չի կարելի. առաջի պատահած կեղտոտ մշակ էլ լինի, պէտք է տալ տանի կորցնի բեզ էստեղից: Սեւ լինէր էն օրը որ քեզ ծնեցի:

Մարթա. Մայրիկ, ինչե՛ր ես ասում:

Աննա. Չայնդ, անզգամ:

Տ Ե Ս Ի Լ 5

Մարթա, Աննա, Յակոբ եւ Ներսէս

Յակոբ. (Փզնկով Ներսէսին ներս է բերում միջի դռնով): Աննա, Ներսէսն է:

Աննա. (Սաստիկ վախեցած): Ի՞նչ է պատահել երեխիս:

Ներսէս. Մի վախենալ մայրիկ: Դռան մօտ մի բնի ինձ վատ զգացի, սրա համար էլ դուռը ծեծեցի: Գարունը լաւ է, երբ մարդ ծառերի տակ է... իսկ էնտեղ... օխ մէկ հնար լինէր ազատուել էնտեղից: Էնտեղ կուրծքս բռնում է, հազը սպանում է ինձ: Կարծես տաքութիւնս սաստկացել է. մէկ տես մայրիկ:

Աննա. (Բռնկով ձեռքը): Կրակի մէջ այրւում է երեխաս:

Յակոբ. Տունս քանդւում է. ես կը գնամ Մինասին կը կանչեմ:

Աննա. Ո՞ւր ես գնում:

Յակոբ. Ես իսկոյն: Երեք բոլէ չի քաշիլ (Գնաց միջին դռնով):

Տ Ե Ս Ի Լ 6

Մարթա, Աննա եւ Ներսէս

Ներսէս. Մի լաց լինի մայրիկ. ես դեռ էնքան էլ վառ չեմ:

Աննա. (Մարթային): Գնա անկողին պատրաստիր: Կո-
րէր:

Ներսէս. Ո՛չ. սպասիր, հարկաւոր չի, թող նա ինձ մօտ
նստի: Նրա քաղցը դէմքին մօտիկ անկողն իմ հոգիս հան-
գատանում է: Եո ցերեկով քիչ եմ տեսնում նրա երեսը,
իսկ գիշերը շուտ եմ տեսնում քնելու: Նստիր ինձ մօտ
Մարթա (Մարթան նստեց): Բայց դու զուգուգու ես. թէ իմ
աչքերս եւ խաւովս եւ ի՞նչ է պատահել սրան: Չը լինի՞ ինձ
համար էք վախեցել: Ոչինչ հոգս մի անէք, թուքս դեռ չի
կարմրել, սա կ'անցնի: Շատ անգամ է պատահում, կար-
ծում ես հիւանդ ես, բայց դուրս է գալիս, որ բոլորովն
առողջ ես: Օ՛ր ինչպէս ներսիս կրակը խօսեցնել է տալիս
ինձ: (Ծիծաղում է, որ փոխում է չոր հալի):

Աննա. Քար կտրուէի ես, էդ ցաւերը չը տեսնէի որդի,

Մարթա. Քիչ խօսիր ապեր, տեսնում ես որ փա-
սում է:

Ներսէս. Բայց ինչպէ՞ս լռեմ: Ես սիրում եմ խօսել,
հանաքներ անել: Եթէ կարողութիւն ունենայինք, կը քա-
շուէի մի գիւղ տեղ, կը հանգստանայի եւ... կարիլի է լա-
ւանայի էլ: Էհ, աւելի լաւ էր մի հովիւ լինէի, երկրագործ,
կառապան... Ի՞նչ եմ տեսնում մայրիկ: Դեռ, փառք Աստծոյ,
եւ 27 տարեկան եմ, բայց մեր գործարանում երեխաներից
շատերը 20 տարուց աւելի չեն ապրում: Խեղճերը կարմիր-
կարմիր թշերով գալիս են, իսկ յետոյ, մնաք բարով խեղճ
մայրեր: Մարթան մի սառը ջուր: (Մարթան գնաց աջ գոնից
բաժակ բերելու): Մայրիկ, ինչո՞ւ է նա փոխուած: Գոնէ նը-
րան լաւ պահեցէք. նա մի գեղեցիկ վարդ է էս թառամած-
ներիս մէջ: Ի՞նչ ենք մենք, մարդուդ ճարգներ:

Մարթա. (Գոյից ջուր առաւ բերաւ): Չի՞ փաստի տ-
պեր:

Ներսէս. Ներսէսն կրակ կայ, պէտք է հանգցնել էդ
կրակը: Որանք է մնացել Սերոբը: Ինչ լաւ կը լինէր մի

օր էս մեր մեծ ծառի տակ մի ուրախութիւն անէինք:
Երևի շուտով կը գայ եւ թուրի ժամանակը: Չէ, մայրիկ,
ինչո՞ւ չէք խօսում:

Աննա. Իհարկէ մի քանի օրից յետոյ թուրն էլ կը
հասնի:

Ներսէս. (Խմեց): Հիանալի է. առայժմ մարից կրակը:

Տ Ե Ս Ի Լ 7

Մարթա, Աննա, Ներսէս, Յակոբ եւ Մինաս.

Յակոբ. (Մտնում են միջի դռնից): Համեցէք: Աննա,
վարպետ Մինասն է. իմ լաւ բարեկամը: Մօտեցիր Մինաս.
մի ամաչել:

Մինաս. Բարի օր ձեզ: (Առանձնապէս անդրում է Մար-
թային. ձեռ է տալիս ամենքին, վերջում Ներսէսին): Քեզ հետ
հօ լաւ ծանօթ ենք Ներսէս ջան: Ձեռքդ տաք է երևում,
ինչպէ՞ս ես զգում քեզ:

Ներսէս. Տաք՝ էնպէս, որ վերմակ հարկաւոր չէ:

Մինաս. Լաւ ես. մի վախիլ:

Մարթա. Սառը ջուրը փաս չի՞ նրան:

Մինաս. Ձէ, վարպետի աղջիկ. քանի որ քրտնած չի,
փաս չ'ունի: Նրա ճարը հէնց էս քաղցր օդն է, որ կայ:
Ի՞նչ անես, թամբաքու հնարողի հերն անիծուի: Էն գիւղու-
մից դժ էլ ես քաշում Ներսէս:

Ներսէս. Ձէ:

Մինաս. Վատն էլ հէնց էդ է է: Քաշողի վրայ էնքան
ներգործութիւն չ'ունի, ինչքան չը քաշողի վրայ: Էնպէս չէ՞
Ներսէս ջան:

Ներսէս. Լաւ ես նկատել:

Մինաս. Նկատելն էլ խօսք է: Ես ինձ վերայ եմ փո-
ղի: Զխելումը մօտիս որ քաշում եմ, կամ գլուխս է պըտ-
տում, կամ ներսս շուռ գալիս:

Յակոբ. Աննա, նա ծխողներից չէ:

Աննա. Երևի ժամանակ չի ունենում:

Մինաս. Ժամանակ չ'ունենալն էլ խօսք է: Երես խօ-
ղիւռ մաշինը մեր առնն է քանդել: Էնպէս օր է լինում
առաւօտից մինչ երեկոյ դործ չի լինում: Պարապ չը մնալու

համար սկսում է ածիլիք սրել, որ իսկի չի էլ մտածել բթանալու: Մին մին կանֆէտ ուտողները փթած ատամ քաշելն էլ որ չը լինի, օրերով պէտք է ճանճ քշես:

Մարթա. (Անդգուշութեամբ փոթկեցնում է ու փախչում աջ, ուսկից յետոյ բերում է ինքնանուր և դնում է սեղանի վրայ, յետոյ նորից յետ դնում):

Մինաս. (Ծածուկ Յակոբին Մարթա հասցէին): Դուր եկաւ:

Յակոբ. (Նոյնպէս): Չէ՞ որ երեխայ է:

Մինաս. Չէ՛ Ներսէս, որ դոխտորին կ'ուզես հարցրո՛ւ. դու պէտք է դուրս գաս էդ տնիծուած թամբաբուրի ֆարբիկից:

Ներսէս. Ե՛ս էլ եմ նոյնը մտածում վարպետ Մինաս, բայց որո՞ւմից հաց ճարինք էս պարոնների համար:

Յակոբ. Չէ՛ Ներսէս, օրերը մի քիչ էլ տաքացան թէ չէ, ես տնայտաճառ մի գործի կը մտնեմ, թող թէ կուզ փողոցներ սրբել տան ինձ: Եղած չեղածներս կը ծախեմ, պարտքի տակ կը մտնեմ, բայց քեզ էդ օրի չեմ թողնիլ: (Մինասին ծածուկ): Դու հարցրո՛ւ, մի քաշուիլ, երիտասարդ է, ո՞վ գիտէ. կարելի է նա մեզնից ծածկում է իրա իսկական ցաւը:

Մինաս. (Նոյնպէս): Խեղքս բան չի կտրում, Ներսէսը էնպէս աղայ չի. բայց կարելի է փորձել: Ներսէս ջան, ես քեզ հետ մի 2 ծածուկ խօսք ունեմ:

Ներսէս. Ի՞նչ հետ. համեցէք: (Դնում են միջի դռնով):

Տ Ե Ս Ի Լ 8

Աննա եւ Յակոբ.

Յակոբ. Աննա, դու ինձ վախեցնում ես, էդ ի՞նչ աչք ունք է քեզանում.

Աննա. Ոչինչ.

Յակոբ. Չէ, մի ասիլ. տեսնում եմ, որ մի ծածուկ միտք ուտում է ներսդ: Ասա ինձ:

Աննա. Դու ասում ես էդ Մինասը լաւ աղայ է:

Յակոբ. Հա, Աննա, մի նեղանալ: Ես ուզում եմ, որ առաջինը նա մի լաւ զննի մեր Ներսէսի հիւանդութիւնը.

երկրորդ, նա ուզում էր փոքր լաւ ծանօթանալ Մարթայի հետ: Նա իրա վարպետութիւնով էնպէս օր է լինում, 3 բուրքի է աշխատում, հանաք չ'իմանաս: Բացի էդ մէկը, գիւղում նրանք յայտնի տուն են, չեմ իմանում քանի հատ հէնց գութան ունեն, քանի հատ եզն և մեղրաճանճ: Տարեկան քանի բռն հէնց գինի են ուղարկում Նիժնի:

Աննա. Եթէ դու լաւ ես ճանաչում, էլ ես ի՞նչ ասեմ:

Յակոբ. Աննա երեւի քեզ էլ է դուր եկել: Արի երեխին տանք նրան: Ես քեզ հաւատացնում եմ, որ նրա իմ աչքում հազար տնգամ բարձր է միւր, էս քաղաքի խմոր, խաղացող և վատ հիւանդութիւնների տէր աղերքից:

Աննա. Ի՞նչ ասեմ, ես ասացի մի կարգին մարդ լինէր, որ նա էլ մի լաւ օր տեսնէր:

Յակոբ. Բայց դու ինձանից մի բան ծածկում ես, ասա... ի՞նչ է պատահել:

Աննա. Բերանս խօսք չի գալիս, մարդ:

Տ Ե Ս Ի Լ 11

Աննա, Յակոբ, Ներսէս. Մարթա եւ Ալեքսանդր

Ներսէս. (Ծիծաղելով մտնում է միջի դռնով): Շատ հանաքչին է վարպետ Մինասը, հայրիկ: (Մտնում է Մարթան աջից և թէյի մօտ նստում):

Յակոբ. Օ՜ նա շատ զաւ աղայ է, ի՞նչ է, ո՞ւր գնաց նա, դու նրան չայի չը կանչեցիր:

Ներսէս. Նա իմ ասելուս չը ուղասեց էլ: Նա ասաց էս բոլորիս կը գամ, և դոխտորական վարձիս տեղ մի լաւ չայ կը խմեմ ձեզ մօտ:

Յակոբ. Էդպէս է. նա չ'ուշակորներից փող չի վերցնում, միշտ ասում է, «Ֆլաս չ'ունի, ֆլաս, երբ կը հարստանաք, կը վճարէք»:

Ալեքս. (Մտնում է ձախ կողմից): Ոսկի հարեաններ, հիւր չէք ընդունիլ:

Յակոբ. Հիւրը Աստուծոն է, ինչո՞ւ չենք ընդունիլ:

Ալեքս. (Ձեռք բռնելով Յակոբի հետ): Չէ, դեռ պիտի ես ծերուկ:

Յակոբ. Լաւ եմ: Ամառը մտադիր եմ մի գործի մտնել:

Ալեքս. Այ՞ն, այդ լաւ կը լինի:

Յակոբ. Ի՞նչ պէտք է անես, մեր ճակատին է գպէս է գրուած. քանի ոյժ կայ, պէտք է գործես:

Ալեքս. Աստուած պահի, դու դեռ աշխատող ձեռքեր ունես:

Յակոբ. Բայց ծայրը ծայրին դժուար ենք հասացնում: Ուրիշ բան է ձեր գործը:

Ալեքս. Էհ, այդ ճշմարիտ կը լինէր, եթէ սահման ծնողներին ձեռին չը լինէր:

Յակոբ. Ես ձեզ կ'ասեմ, լաւ է, երբ որդին ծնողի խօսքից չի դուրս գալիս:

Ալեքս. Դէ այն ժամանակ թող ես կ'ոյր ծնուէի, խնւծնուէի, քանի որ ես իրաւունք չ'ունեմ ասելու, որ սա աւելի զեղեցիկ է քան թէ միւսը, որ սա աւելի է ինձ դուր գալիս, քան ձեր ասածը:

Յակոբ. Ձէ պարոն: Որդին երբէք հօր ցոյց տուած ճանապարհից չը պէտք է դուրս գայ: Ի՞նչ է երկտասարդը. եթէ նրա արիւնի մէջ մի քիչ բնական աղնուութիւն կայ, էդ ուրիշ բան. բայց եթէ չը կայ, ուղղակի գլուխը պէտք է կապած պահես. որովհետեւ ի՞նչ զանազանութիւն կայ նրա՝ կամ թէ մի շունի մէջ: Իսկ ի՞նչ է շունը, բայց թող փողոց և կը տեսնես, որ իսկոյն նա իրա շնութիւնը արու:

Ալեքս. Բայց եթէ մի հարուստի որդի, — ես իհարկէ օրինակի համար եմ ասում, — եթէ նա սիրել է մի աղքատի աղջիկ, իսկ հայրը նրան տաւած է, «կորիք, շուն, չը համարձակուես. և եթէ դու իմ կամքին հակառակ կը գնաս, ես քեզ կը զրկեմ հայրական ժառանգութիւնից և տանից դուրս կը վաճեմ»:

Յակոբ. Եթէ ես իմանայի թէ ի՞նչ է քն հարուստը, ես նրա ճակատին կ'ասէի, որ ինքը Աստուծոյ Որդին ոչ ոքից չէր քաշուած և միշտ աղքատներին հետ էր նստում վեր կիսում:

Ալեքս. Ուրեմն:

Յակոբ. Ուրեմն էն, որ խօսքը աղքատութիւնի մասին չը պէտք է լինի, այլ անարատ անունի մասին: Դուք ասացիք օրինակի համար, ես էլ կ'ասեմ. Իմացած եղէք պարոն, որ ոչ մէկ մարդից ես չեմ ամաչիլ, որ ես աղքատ եմ. բայց

թող վայ լինի մեր գլխին էն օրը, երբ որ իմ ընտանիքից մէկնումէկը փողի համար իրա պատիւը կը ծախի:

Ալեքս. Կարծեմ դուք մի որդի ունէք:

Յակոբ. Երեսու մի տաք, որ իմ պատառիս մէջ էլ կեղտ է դուրս եկել: Բայց նրան փչացնողը եղի է փողոցը, և ոչ թէ իմ տունը: Իմ տանս մէջ, ահա, դուք տեսնում էք, ամենքը ձեր աչքի առաջ կ'են. սրանք բացի Աստուծոյ խօսքը, ուրիշ բան չեն լսել:

Աննա. (Ալեքսանդրին ծածուկ): Ես ձեզ հետ ծածուկ խօսք ունեմ:

Ալեքս. Ի՞նչ հետ, խնդրեմ:

Մարթա. (Ծածուկ): Մայրիկ, խնայիր ինձ ի սէր...

Աննա. (Նոյնպէս): Ձայնդ անդգամ: (Գնացին ձախ կողմ):

Ներսէս. (Հօրը ծածուկ): Էստեղ մի բան կայ...

Յակոբ. Մէկ էս կողմ քաշուենք: (Գնացին աջ կողմ):

Մարթա. (Մենակ): Ա՛հ. բաւական է. պէտք է վերջ

զնիլ էդ խայտառակութեան, պէտք է ազատիլ ինձ էդ կրակից... Էլ ամեն ինչ կորաւ զնաց ինձ համար... թող խաւարուի իմ կեանքիս արեւ... (Ջրհորի մօտ)... Ներքին ինձ, Աստուած... ես իմ արածս չեմ հասկացել... Միայն Քեզ է յայտնի իմ անմեղութիւնը: Մնաք բարով իմ կեանք և երկտասարդութիւն, մնաք բարով իմ երկխայտեղ երազներ: (Նայեց Ջրհորին): Ա՛հ... ես արդէն այնտեղ եմ... Նա ինձ քաշում է... նա ինձ ուզում է կլանել... փրկեցէք ինձ... ես չեմ կարող... չեմ կարող... Ես չեմ կամենում մեռնել... ես կամենում եմ ապրել...:

Տ Ե Ս Ի Լ 10

Մարթա եւ Մինաս

Մինաս. (Միջին դռնից թաշկինակի մէջ՝ մեղր ու բաղարջ ձեռին): Վարպետ-Յակոբի աղջիկ: Ձեռնակաւոր, եթէ մեղր ու (թաշկինակը բացելով) բաղարջ համեցէք անեմ: Հարուստը աւելորդից, իսկ մենք Աստուծոյ տուածից. խնդրեմ ներողութիւն:

Մարթա. Շնորհակալ եմ, դրէք էնտեղ: (Մինասը դրից սեղանի ծայրին):

Մինաս. Ես քեզ հետ թէպէտեւ շատ մօտ չեմ, բայց հերդէնքան է պատմել, որ հէնց իմանաս թէ մենք շատ հին ճանաչներ ենք: Արթըրը ասա, իմ մօտիւ նա քեզ խոսիլ բան չի՞ ասել:

Մարթա. Ասել է:

Մինաս. Արթըր: Ի՞նչ է ասել:

Մարթա. Որ դուք կարողանում էք շատ լաւ քիթ ու պոռնոգիւնիկ ծամուտել և զոմէշներէ հետ կուշտի կաշի:

Մինաս. Հա հա հա: Էդ մէկը լաւ է ասել. սրանք ինձանումը կան:

Մարթա. Որ դուք աներեսի նման մտնում էք քնակի, որակի ձեզ չեն համեցէք՝ արել, խօսեցնում էք նրանց, սրանց հետ ծանօթ չէք:

Մինաս. Օ հօ հօ հօ. լաւ կոտրեցիր ինձ ևս ու իմ Աստուածը: Լաւ, որ լսող չ'եղաւ: Բայց եթէ խելքս կրունկումս չի ալ թէ գլխիս մէջ, կարծեմ քիչ առաջ հէնց էստեղ ծանօթացանք և մին քիչ էլ ձեռքդ լաւ հուպ տուի:

Մարթա. Բայց էդ անքաղաքավարութիւնը բաւական չէ՞...

Մինաս. Էս մէկը ներս: (Խոնարհ): Կարելի է քեզ դուր չ'եկաւ իմ կոշտութիւնս, բայց սիրտս ուղիղ է, իսկ ուղիղ սիրտը քողցը լեզուի հարկաւորութիւն չ'ունի: Սոքա եմ ասում:

Մարթա. Է՞լ ինչ:

Մինաս. Ի՞նչ ասեմ: Ի՞նչքա՞ն ևս ասում, որ անամօթի մէկն եմ և որ մտել եմ մին տեղ, որակ իմ չափս չեմ հասկանում: Իհարկէ երեսնան էլ է իմանում, որ ոսկին աւելի լաւ է, քան երկաթը, և որ սոխից շաքարը քաղցը է: Գո տեղը լինէի, ես էլ կասէի: Ո՞վ է սա, ունեցած չ'ունեցածը մին մկրատ է մին տծիլի: Սոքա եմ ասում:

Մարթա. Բաւական է ի սէր Աստծոյ. ինձ ի՞նչ թէ դուք ինչ ունէք:

Մինաս. Էդպէս շուտ գլուխդ տարի, հա: Մօրս կաթը վկայ, իմ միտքս էն չէր, որ քեզ բարկացնեմ:

Մարթա. Օ՞խ. ի՞նչ էք ուզում:

Մինաս. Ոչինչ. քո հրամանը:

Մարթա. Խօսեցէք էլի:

Մինաս. Ի՞նչ խօսեմ: Դու չայ համեցէք անելու տեղ, քիչ մնաց, որ բերած ամանս էլ գլխիս կոտրես:

Մարթա. Ներողութիւն. ես իմ սասածը իմ արածը չեմ իմանում:

Մինաս. Հա: Դէ էն ժամանակ դու էլ քո ծառայիդ հերիք, որ համարձակուեց քեզ աւելորդ գլխացաւանք տալ:

Մարթա. Երեւի մի ասելիք ունէիք:

Մինաս. Վարպետ-Յակոբի աղջիկ, Էկ դու լինես էն սուրբ մեռնը, մի բարկանալ մի բան ասեմ:

Մարթա. Դէ ասացէք էլի:

Մինաս. Ինչո՞ւ ես էսքան տխուր: Եթէ Սերորի համար է, հոգս մի անիլ, մին կերպ ճանապարհի կը բերենք, եթէ հօրդ ու մօրդ համար է, դէ ծեր մարդկանց համար ի՞նչ հնգս, եթէ Ներսէսի համար է, միամիտ կղեր, ևս նրան կը լաւացնեմ, իսկ եթէ քեզ համար է...

Մարթա. Ի՞նչ:

Մինաս. Ոչինչ, որովհետեւ ես վախենում եմ, ինձ համար լինի:

Մարթա. Ինչո՞ւ ձեզ համար պէտք է լինի:

Մինաս. Ի՞նչ գիտեմ, ասում եմ չը լինի թէ վախուշ լով հիմի մտքումդ ասում լինես, — «խեղճ աղայ, Էկել է առաջիկա մօմի նման հալում է, ամօթից ճաքճաքին է դալիս, բայց չի կարողանում մի բերան մի խօսք ասի թէ, այ աղջիկ ես քեզ սիրելուց մեռայ, մեռայ, մեռայ»:

Մարթա. (Բռն ծիծաղով): Այ անամօթ, աներես: (Աչքերը ծածկում է):

Տ Ե Ս Ի Լ 11

Մարթա, Մինաս, Յակոբ եւ Ներսէս, յետոյ Աննա եւ Ալեքսանդր.

Յակոբ. (Աջ կողմից): Ա՜ վարպետ Մինաս, դու արդէն եկե՞լ ես. էդ լաւ եղաւ: Գո ասածիդ պէս եղաւ, Ներսէս, կը նստենք մեր մեծ ծառի տակ և ուրախ-ուրախ թէյ կը խմենք:

Ներսէս. Համեցէք վարպետ: Էդ ի՞նչ է, մեղը ու բաղարջ: Ինձ քլաս չէ, վարպետ:

Մինաս. Ոչ թէ քեզ, քրոջդ էլ փաստ չէ:

Ներսէս. Ի՞նչ է տառա, Մարթա:

Յակոբ. Մի խանգարիլ նրանց: (Ալեքսանդրին ուր Աննայի հետ մտաւ ձախից): Ա՛, համեցէք, Աննա ի՞նչ էիք խօսում պարոնի հետ:

Աննա. Ոչինչ, դու թէյդ խմիր:

Յակոբ. (Ալեքսանդրին): Ձէք կամենում մի բաժակ թէյ: Համեցէք, Աստծոյ տուածից անոյշ արէք: Բայց որովհետեւ լաւ տանտիրոջ պարտաւորութիւնն է սեղանի պահապանը քաղցը խօսքերով լրացնի, ես էլ ձեզ համար կը խօսեմ Բանին Աստծոյ խօսքը:

Մինաս. Էդ մէկը լաւ է. ես ուրախութիւնով աղանջ կը դնեմ:

Յակոբ. Սրա համար էլ ես քեզ հաւանում եմ Մինաս: Իսկ դուք պարոն, կարելի է ձեզ ձանձրալի թւայ. զիա՞ք, հարուստները մի քիչ դէպի Աստծոյ խօսքը սառն են լինում:

Ներսէս. Շատ հասկանալի է հայրիկ, ի՞նչ խնդրեն, երբ ամեն բան ունեն:

Յակոբ. Իսկ արքայութիւնը: Մի՞թէ հանդերձեալ կեանք չը կայ:

Մինաս. Սրա համար էլ տառած է, «ուզողը տսեղի ծակով անց կը կենայ, իսկ հարուստը արքայութեան դռնով ոչ»:

Աննա. Աւելի լաւ է ուրիշ բան խօսէք:

Ներսէս. Մի նեղանալ, թող խօսի հայրիկը:

Յակոբ. (Դրբի մէջ ցոյց տալով): Տեսէք էստեղ ինչ լաւ է տառած: Երբ կը կանգնես Նրա առաջ, Նա քեզ չի տսի, կուշտ ես եղել թէ քաղցած: Նա քեզ կ'առի, ուր է քո գործը, ուր է քո գործը: Ես տառած եմ քեզ, մանրդ, կը դողաս Նրա առաջ, կը դողաս: Երանի նրան որ կը խնամէ բանառում լինողին, որ ջուր կը տայ ծարաւին:

Աննա. Հէրիք է. քիչ տաքացիր, կը փաստի քեզ:

Յակոբ. Նա կը պատժի չարին, իսկ բարիին կ'առի Էկ ինձ մօտ ով ընտրեալ, Նա, Որի ձեռքին է արդարութեան կշիռը: Օ՛, օրհնեցէք Տէրի անունը յաւիտենից յաւիտեն:

Աննա. Վերջացրաւ մարդ, բաւական է:

Յակոբ. Ջարհուրիկ է, քարոզիչը բերան է բացում թէ չէ, մէկ էլ տեսնես մենակ է ֆապիլ: Աննա, սա լաւ բան չէ, դու ոչ աղօթք ես սիրում, ոչ Աստծոյ խօսքը:

Ներսէս. Մայրիկը գործի ձեռքից երբ է ազատ շունչ քաշում, որ աղօթքի մասին մտածի:

Յակոբ. Դէ ես մեղայ Աստծոյ, դուք խօսեցէք:

Տ Ե Ս Ի Լ 12

Աննա, Մարթա, Մինաս, Յակոբ, Ալեքսանդր, Ներսէս եւ Սերոբ

Սերոբ. (Մտնում է միջի դռնից): Էստեղ մէկը աւելորդ է:

Յակոբ. Էստեղ ոչ որ աւելորդ չը կայ. էստեղ աւելորդը միայն դու ես: Կորիր, հեռացիր էստեղից:

Սերոբ. Էստեղ մէկը աւելորդ է, տառած եմ:

Մինաս. Կարելի է ես եմ աւելորդը, ես իսկոյն (ուզում է վերկենալ):

Յակոբ. Խնդրում եմ նստի: Նա ի՞նչ իրաւունք ունի: Դու ի՞նչ իրաւունք ունես:

Սերոբ. Իմ իրաւունքիս վկայականը էստեղ է: (Յայց է տալիս պիջակի տակ):

Յակոբ. Ուր առնողը սրով կը սպանուի:

Ներսէս. Հանգստացիր հայրիկ. թող նա նստի մեզ հետ. մոռացար քարոզը:

Յակոբ. Տէրը ձեզ եղիցի, հասում է, թող նստի:

Ներսէս. Մարթա, չայ աճա Սերոբի համար:

Սերոբ. Նեղութիւն միք բաշխ: Դուք կարծում էք իմ կոկորդով էսօր չեմ կը դնայ: Դէ՛ս, էլ ո՞վ ինչ ունի տակու թող վերջացնի:

Ալեքս. Էհ. ինձ ներեցէք: (Ուզում է գնալ):

Սերոբ. Սպասեցէք պարոն, ես ձեզ հետ խօսք ունեմ:

Ալեքս. Յետոյ կը տեսնուենք:

Սերոբ. Ձէ. ես «յետոյ» սիրողներից չեմ: Պարոն դո՛ւստուր, չը վերջացրիք էդ գեղին ջուրը:

Մինաս. Ը՛հ, վերջացրի:

Սերոբ. Էլ խօսք չ'ունեմ տակու:

Մինաս. Շատ էլ բանում, քանի որ դանակը կտորվի
ևս դրեւ, յնո՞րս:

Սերոբ. Դէհ, ցոյց տուր քաղաքավարութիւնդ:

Մինաս. Ես իմ քաղաքավարութիւնս ցոյց կը տամ,
բայց բունը մին քաղաքավարութիւն չէր: (զնայ միջի դռնով):

Տ Ե Ս Ի Լ 6

Աննա, Յակոբ, Ներսէս, Ալեքսանդր, Մարթա եւ Սերոբ

Յակոբ. Քեզ ո՞վ իրաւունք տուաւ իմ հիւրիս փախցը-

նել:

Սերոբ. Ինձ իրաւունք ունոյ՞լ մեր ընտանիքի պա-

տիւն է ծերուկ:

Յակոբ. Ի՞նչ:

Սերոբ. Այո՛, ես անառակ եմ, ես շարժատան եմ, բայց
տեսնուում ես էս մուշտին: Քիչ ատամներ չի թափել նա,
երբ նրանց ետեւում մի չար լիզու համարձակուել է յիշոյց-
ներով կպչել ձեզանից մէկունէկի անունին:

Ներսէս. Էստեղ մի վատ բան է կատարուել, որը ես
չեմ իմանում:

Սերոբ. Լսիր ապեր, կատարուել է թէ չէ կատարուել,
էստեղ պէտք է պարզուի, որովհետեւ էս օր դատաւարանի
օր է: Քանի որ քո գլուխդ գործով է խառն եղել, կամ թէ
կարելի է հիւանդութիւնդ խնայել են, քեզ բան չէն ասել,
քանի որ էս ծերուկը Բանին Աստծոյ խօսքի վրայ է ցնո-
րուել, քանի որ էս խեղճ պառաւը մի կտոր հացի համար
սրահնրա դռները ընկած տան պահպանութիւնը յանձնել
է սրան, էս անլիզու դառնին, մեր բակի մէջ տուում են
զո՞ղ է դարան մտիւ... և գողացել է մեր տան պատիւը:

Յակոբ. Ո՞վ է հարել էդ սուտը... սո՞ւտ է:

Սերոբ. Եւ էդ գողը ինքը ուրիշներէ մօտ պարծեցել
է, որ ինքը մեծ աղամարդութիւն է արել: Հիմի մենք կը
տեսնենք թէ ո՞վ է աղամարդը:

Ներսէս. Մայրիկ, էդ ի՞նչ եմ լսում:

Աննա. Խնայիր նրան, նա չի կարող գիմանալ:

Սերոբ. Իսկ դու, դու կարող ես գիմանալ: Իսկ ես,
իսկ մենք ամենքս կարող ենք գիմանալ:

Յակոբ. Աննա, Աննա, սա ի՞նչ խօսակցութիւն է, որ
ես լսում եմ:

Աննա. Ես ոչինչ չեմ իմացել, վկայ է Աստուած:

Սերոբ. Եւ յետոյ, երբ որ ինձ նման շառաւտանը մին
ծակ ու ծուկում շնութիւն անողի կեղտոտ գլուխն է թըոց-
նում, թքում են նրա երեսին, ձայն են տալիս՝ աւաղակ է
նա, արիւն խմող գազան է նա: Ես ձեզ եմ հարցնում պա-
րոն, ի՞նչ կ'անէիք դուք իմ տեղ:

Ալեքս. Ես նոր եմ իմացել, որ պատիւը գողանալու
բան է:

Ներսէս. Վերջ դրէք էս խօսակցութեան:

Աննա. (Բոլբարար ծածուկ Մարթային): Հեռացիր, կո-
րիւր էլի: (Մարթան իսկոյն գնում է աջ):

Տ Ե Ս Ի Լ 8

Յակոբ, Աննա, Ներսէս, Սերոբ եւ Ալեքսանդր

Աննա. Տղամարդ էք դուք, բայց ի՞նչ խօսակցութիւն
էք անում աղջիկ-արմատի մօտ:

Սերոբ. Շարունակեցէք, պարոն. ի՞նչ ասացիք, թէ
պատիւը ի՞նչ է եղել:

Ալեքս. Ես ասում եմ, ես նոր եմ իմացել, որ պատիւը
կարելի է գողանալ:

Սերոբ. Ուրեմն ձեր ասելով մեր տունը մի պոռնկա-
նոց էր ձեզ համար:

Ալեքս. Եթէ ես իմանայի, որ դու ես այս տան տէրը,
գուցէ ես իսկի ոտք էլ չը դնէի այստեղ:

Սերոբ. Ա՛... դուք լու էք ճանաչել ձեր մարդին. թո-
ղէք որ մենք էլ ձեզ լաւ ճանաչենք: Ի՞նչ է ձեր միտքը
հիմայ:

Ալեքս. Բայց միթէ այս բոլբարի և այդպէս վտաղ կա-
րելի է պատասխան պահանջել, առանց թողնելու, որ մարդ
մի լաւ մտածի:

Սերոբ. Ա՛, բայց միթէ նոր պիտի մտածէք: Իսկ էս
տան պատիւը ոտնալոխ անելուց առաջ:

Ալեքս. Չը գիտեմ ի՞նչ ես ուզում ինձանից: Շատ կը
ստիպես, ես էլ կ'ասեմ...

Սերոբ. Ի՞նչ կ'ասես:

Ալեքս. Ինչ որ կ'ուզես հասկացի՞ր:

Սերոբ. Պարզ ասա:

Ալեքս. Ես արդէն ասացի:

Սերոբ. Ուրեմն դու մերժում ես: Ձէ դու էլ մերժեց
չես կարող, խելքդ գլուխդ հաւաքիր, ես ասացի որ էսօր
դատաստանի օր է:

Ալեքս. Ինչպէ՞ս, ուեմն դու կարծում ես, որ ինձ կը
ստիպես զօռով:

Սերոբ. Այո, ես քեզ կը ստիպեմ զօռով: Երդուում եմ
սրա կաթով, որ դու իմ ձեռքիցս չես պրծնիր: Խելքի եկ
և ամենքիս առաջ երդումն արա:

Ալեքս. Ի՞նչ է, ինձ սպառնալի՞ք ես տալիս: Դու գի-
տե՞ս ում հետ ես խօսում: Բաւական է ձայն տամ և ամ-
բողջ քաղաքը ոտքի կը կանգնի:

(Հետևեալը կատարւում է ըսպէաբար):

Սերոբ. Դէ ձայն տուր շուն շան որդի...

Ալեքս. Ապա մի համարձակուի՞ր:

Աննա. Աստծոյ սիրուն խնայեցէք:

Սերոբ. Թողէք ասում եմ:

Ներսէս. Սերոբ, Սերոբ:

Յակոբ. (Ալեքսանդրին): Հեռացէք, հեռացէք:

(Մինչ այդ Մարթան դռնից ահաւ այդ և ճշաց):

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՐՐՈՐԴ

Բեմը ներկայացնում է երկրորդ գործողութեան տեսարանը: Աջ կողմ
աւելացրած է մի հասարակ մահճակաղ, մի բարձ վրան:

Տ Ե Ս Ի Լ 1

Մարթա եւ Յակոբ

Յակոբ. Ինչի՞ չես հաւատում մարդիկ, որ մեզ ամեն
նեղութիւնից, ամեն վատ բանից, ամեն մոլորութիւնից
փրկողը Բանին Աստծոյ խօսքն է: Տեսնում ես ինձ. կը
զցեմ ինձ կաուրից և անմիա կը մնամ, որովհետեւ հաւատը
պիտի է իմ մէջ: Ը... իսկ դո՞ւ... եթէ դու հաւատով լսած
լինէիր ասածներս, դու մեղքի մէջ չէիր ընկնիր: Ասում էի
քեզ «Մարթա, սիրիր Աստծոյ խօսքը:

Մարթա. Ես կը սիրեմ:

Յակոբ. Կը սիրես...: Դու խայտառակեցիր ինձ, խեղ-
դեցիր ինձ: Բաւական է:

Մարթա. Ո՞ւր ես գնում: (Բռնում է նրան):

Յակոբ. Ո՞ւր եմ գնում: Գնում եմ գործ պտուեմ, պարտք
առնեմ, տանը հաց չկայ: Գնում եմ Մլինասին կանչեմ, որ-
դիս ձեռքիցս գնում է:

Մարթա. Ձէ. ես լսեցի, ես իմանում եմ որտեղ ես
գնում: Աստծոյ սիրուն թողէք էդ բանը... մի գնալ:

Յակոբ. Ա՛ա, հիմի էլ դռան ետեւից ականջ դնե՛լն ես
սկսեցի: Դէ որ իմանում ես, խմացիր: Այո, ես գնում եմ
նրանց մօտ. ես նրանց դուռը կը կոտրեմ. ես կը բռնեմ
նրա շաուտան հօր օձիքից և կ'ասեմ. «Քո լիրը և անդգամ
որդիդ եկել և գլխից տարել է իմ աղջկանս, եթէ նա նրա

վրայ չի պսակուել, ևս ամենքիդ քաշ կը տամ դատարանի առաջ»։ Այո, նրան էլ, որդուն էլ, մօրն էլ։ Օր ծերութեան մի ոտս գերեզմանի մէջ, ևս չեմ կարող տանել էս անպատուութիւնը։ Դէն կաց, էլ դանակը ոսկորին ևս հասցրել։ Հեռացիր։

Մարթա. Մի՛ գնալ, ինձ մենակ մի թողնիլ էստեղ։
Յակոբ. Ձայնդ, ձայնդ։ (Գնում է միջի դռնով)։

Տ Ե Ս Ի Լ 2

Մարթա և Ալեքսանդր.

Ալեքս. (Ձախ կողմից)։ Մարթա։

Մարթա. Օ՛հ. հեռացէք էստեղից։ Եթէ մէկը էս բո-
պէիս հէնց էստեղ տեղնուտեղը ինձ շանսատակ անէր, հա-
ւատացնում եմ, նա մի բարի գործ կը լինէր արած։

Ալեքս. Երեխայ մի լինիլ։ Դու առաջինը չես և վեր-
ջինն էլ չես լինիլ։ Միայն ձեր ընտանիքն է, որ այդ դա-
տարկ բանը այդքան մեծացնում։ Մայրեր կան, որ իրանց
ձեռքովն են ծախում իրանց աղջկան, իսկ դու հօ փառք
Աստծոյ քո կամքովդ ես եկիլ։

Մարթա. Ես կարծում էի, որ սէրը կարող է միայն
սուրբ լինիլ։ Ես աշխարհից աւելի մեծ բախտ չէի սպա-
սում։ Դուք իմացաք որ ես մի անփորձ աղջիկ եմ, եկաք
և ինձնից գողացաք իմ սիրտը։ Հիմի էլ չեմ իմանում, էլ
թնչ էք ուզում ինձնից։

Ալեքս. Բայց եթէ քո այն սրբիկայ եղբայրդ մէջտեղ
չը մտնէր, ո՞վ էր իմանալու թէ դու իմ սիրեկանն ես։

Մարթա. Բայց մի՞թէ նրան ես էի ասել։

Ալեքս. Երևի հարբած ժամանակս բերանիցս խօսք եմ
բաց թողել ընկերներիս մօտ, անպիտանները նախանձից
տարածել են։ Ներքի ինձ։

Մարթա. Երևի ձեզ համար մի դատարկ բան է եղել
խաբել, անբախտացնել, դէն շարտել և յետոյ անամօթի
պէս ներողութիւն խնդրել։

Ալեքս. Դու թնչ գիտես, որ ես քեզ առաջուանից էլ
աւելի չեմ սիրում։

Մարթա. Մի՞թէ դուք կամենում էք, որ ես յիմարս

էլի հաւատամ ձեզ։ Թե՞ դուք կարծում էք, որ ես վերջի
ամօթն էլ կը մոռանամ և կը շարտեմ ինձ փողոցի մէջ
տեղը։

Ալեքս. Լսիր թէ ես ինչ եմ մտածում։ Ահա մի աղքատ
աղջիկ. ես սիրահարուել եմ նրա վրայ, պսակուել և բերել
նրան մեր տուն։ Շատ լաւ։ Հիմայ դու ինքդ երեակայիք,
թնչ կը լինէր քո դրութիւնը մեր տան մէջ։ Ծնողներս կը
տեսնէին որ դու ոչ քաղաքավարի նստել գիտես, ոչ խօ-
սիլ. հ'մ մինչև անգամ դու պարել չը գիտես։ Մայրս քեզ
հետ ոչ մի տեղ չէր դուրս գալ, հայրս ամեն օր երեսովդ
կը տար, որ դու մի քաղցածի աղջիկ ես, և որ մի սրբիկայ
եղբայր ունես։

Մարթա. Իսկ դուք ինչ կ'անէիք։

Ալեքս. Ոչինչ. կարող էի ծաղուռն հանել, որ վաղուայ
օրը երկուսիս էլ տանից դուրս հանէին։ Սրա համար էլ ա-
սում եմ քեզ, ապրենք ծածուկ, մինչև որ նրանք գլուխները
գիտնին կը դնեն։

Մարթա. Ոչ ամօթ կայ ձեր երեսին և ոչ էլ Աստուա-
ծանից էք վախենում։ Թող ես խաբուած լինեմ, թող ես
անպատուած լինեմ, բայց իմանալով, խելքս գլխիս ես ինձ
ծախել չեմ թոյլ տալ,—թէ կուզ թագաւորութիւն խոստա-
նաք ինձ։ Ես աւելի շուտ ինձ կախ կը տամ, բայց ձեզ
նման մի մոլորեցնողի հակից էլ չեմ գալ։ Ես հաւատացի
ձեր սուտ երգումներին, որովհետեւ ես կարծում էի ձեզ էլ
մայր է ծնիլ, ես կարծում էի որ դուք էլ մի քոյր ունէք,
ևս կարծում էի որ դուք էլ մի մարդ էք։ Մրանից յետոյ
ինձ համար բոլորը անցաւ։ Ես ձեզ տեսնել անգամ չեմ ու-
զում։ Ես զգում եմ ձեր լիրբ անամօթ դէմքից։

Ալեքս. Իմացիր, եթէ առաջուայ ոչէս իմ ձայնը լսե-
լուս գաղտնի տեսութեան չես գալ, ես ոչ սքից չեմ ծած-
կիլ, որ դու իմ սիրեկանն ես։

Մարթա. Իսկ ես էլ ձեզ տեսնում եմ, որ-եթէ ձեր ձայ-
նին ձայն տուող չ'եղաւ, պարեցէք ձեր սիրեկանին էս
ջրհորի մէջ խեղդուած։ Հեռացէք, թէ չէ էս բոպէիս ես կը
բղաւեմ։

Ալեքս. Ես մի բայլ էլ չեմ անիլ։

Մարթա. Օ՛հ, զգուշիւ, զգուշիւ։ (Վաղում է աջ դռնով)։

Ալեքս. Մի՞թէ ճշմարիտ նա հաւատացած է եղել, որ

ես նրա նմանի վրայ թոյլ կը տայի ինձ պատկուհի: Տես սիրտը ինչ է ուզել: Բայց ես գիտեմ, կնոջ համար առաջի սիրածը միշտ քաղցր էլ կը մնայ: Իհարկէ մի առժամանակ նա կը կոտորուի, կը ձեռնցնէ իրան, որ իմ առաջարկութիւնը նրան խորթ թւայ, յետոյ էլի, քիչ-քիչ ինձ մօտ կը գայ: Հարկաւոր է պառաւների հետ հաշտութիւն գցել: Հնար չը կայ, այդ քաղցածներէ աչքը միայն փողով կարելի կը լինի կուրացնել: Այդ խայտառակութիւնից յետոյ արդեօք կը դառնա՞ր մի յիմար, որ պատկուհի նրա վրայ: Տեսնենք թիւ կը համարձակուի: (Գնում է ձախ):

Տ Ե Ս Ի Լ 3

Աննա եւ Ներսէս

Ներսէս. (Մտնում է աջ դռնից): Մայրիկ, չը քաշուենք մէկգլմէկից, պարզ խօսենք: Անցածը անցել է, էլ հօ չե՞նք տանջելու նրան: Ինչի՞ չէք թողնում նա էլ գայ, նստի մեզ հետ: (Երբեմն թեքւում է մահճակալի վրայ):

Աննա. Ո՛չ էր ծնուել անպարտ: Սա օր է, որ մենք ենք քաշում: Առաջ մի կտոր հացի հոգան էր ինձ մաշում, հիմի մի կողմից էն մեռածի հոգսը, միւս կողմից քո հիւանդութիւնը, հիմի էլ էս անբախտութիւնը: Միթէ Ստածոյ երկնքի տակ մենք մի օր չը պէտք է տեսնենք: Ախր ինչո՞ւ է նա էդքան խռով կացիլ մեր գլխին: Շատ բան էինք ուզում Քեզնից Աստուած: Ախր մեր մեղքը ի՞նչ է այ որդի:

Ներսէս. Բայց էդ անպարտ շան ծնունդները ի՞նչ ասես չեն խաբում: Մի կողմից էլ Մարթային մեղադրել չի կարելի. խեղճ երեխան աչք է բացել թէ չէ տեսած լսածը ախ է եղել, վախ:

Աննա. Ի՞նչ անենք, որ մեր ճակատին էդպէս է գրած, վեր կենայինք Աստծոյ հետ կռիւ անէինք: Խեղաուէր ու պրծնէինք նրա երեսից:

Ներսէս. Ի՞նչ էս ասում մայրիկ, քո սիրտը բոլորովին փոխուել է:

Աննա. Քար կտրուէր նրա սիրտը, ինձնում սիրտ է մնացել:

Ներսէս. Տեսնել նրան ոչ թէ խաբուած, այլ խեղճ գուած... Էլ ի՞նչ վրայ ես դնում քո յոյսդ, խեղճ պառաւ:

Աննա. Աւելի լաւ էր խեղճուած լինէր, քանց էսպէսի մէկ դժոյքի պատիժ բերած լինէր մեր գլխին: Գիշեր ցերեկ ցաւս կուլ տալով ես խեղճուեցի:

Ներսէս. Բաւական է մայրիկ, կանչիր նրան: Ես ուզում եմ քո մօտ մի քանի խօսք ասեմ նրան: Էն Մինասը ուզում է նրան:

Աննա. Միթէ ես նրան մի սափրիչի համար էի աչքիս լոյսի պէս պահել մեծացրել... Էնտեղը հասցրեց, որ նրան էլ արժանի չենք:

Ներսէս. Ինչի՞ համար:

Աննա. Ասում ես պարզ խօսենք: Չէ՞ որ էս օրուայ խայտառակութիւնի մասին նա էլ լսած կը լինի: Ուզում էք մի նոր խայտառակութիւն էլ յետոյ գայ գլխներին:

Ներսէս. Ո՞վ գիտէ, կարելի է խեղճ աղան էնքան է սիրահարուել Մարթայի վրայ, որ էդ բաները իսկի աւկանջը չի մտնում:

Տ Ե Ս Ի Լ 3

Աննա, Ներսէս եւ Սերոբ

Սերոբ. (Գալիս է միջին դռնով): Կարելի՞ է մասնացել ձեր ծածուկ խորհրդին:

Ներսէս. Լաւ բոլորին եկար Սերոբ ջան: Մէջտեղ մի հարց կայ, որի վճռելու մէջ դու էլ ձայն ունես: Ընտանեկան խորհուրդ է:

Սերոբ. Ընտանիական խորհուրդ: Շատ լաւ: Ի՞նչ ասացէք տեսներ բանը ինչո՞ւն է: Տղայ էր ուզում պատկել, թէ աղջիկ էր ուզում գլխից ռազ անել: Եթէ խօսքը իմ մասին է լինելու, խնդրեմ նեղութիւն չը քաշէք, որովհետեւ ես մտքումս դրել եմ վարդապետ ձեռնադրուում:

Ներսէս. Մի ծիծաղել: Չէս իմանում, որ սրանով մայրիկի սրտին ես կպչում:

Սերոբ. Հա՞ մայրիկ: Սրտիդ կպչի:

Աննա. Դու չը լինէիր, էդ խայտառակութիւնն էլ էդպէս չէր բացուիլ: Ե՞րբ ես ձանաղարհի գալու, որդի:

Սերորը, Ի՞նչ ճանապարհի մասին է: Փռնդ կո ուզում.
համեցէք: (Մի բուռ փող կապած գցում է սեղանի վրայ): Ծախ-
սիր, խմիր, քէֆ արա:

Աննա. Յեա վեր ան, քո փողդ մեզ հարկաւոր չի:

Սերորը. Հասկանում եմ մայրիկ: Դու կարծում ես
խփած են: Չէ, սխալ եմ: Հիմի խփելը թողիկ եմ և դտել
եմ աւելի աղնիւ փեշակ. — խաղացող եմ դառել: Աստուած
զօրութիւն տայ մեր տղերքոնց մէջքին. էս գիշեր բախտը
շուռ տուաւ իմ կողմը և զորս դու պատուիրեցիր, թեփ-
րոտեցի անիրաւունքին:

Ներսէս. Յեա վերցրու: Չէս իմանում, որ նա ձեռք
չի տալ:

Սերորը. Ոչինչ, մոռնաւ էք հաշոււ. թող իմ գլը-
պանումս մնայ: (Դնում է գրպանը): Սե օրի համար հարկա-
ւոր կը գայ: Դէ գոնէ ասացէք տեսներ: Ինչո՞ւ է աչք-
ունքներդ կախ:

Աննա. Ե՞րբ է մեր աչքունքը բաց եղել:

Սերորը. Ինձ հարցնես, ողջ աշխարհը չ'արժի մարդիս
մի կաթիլ արտասուքին անգամ: Աշխարհը արժանի է որ
միայն թրեա նրա երեսին և կոխ տաս: (Անում է):

Ներսէս. Գնա մայրիկ կանչիր Մարթային. թող Սե-
րորն էլ իր կարծիքը յայտնի: (Աննան գնում է աջ դռնով):

Տ Ե Ս Ի Լ 5

Ներսէս եւ Սերոր

Սերորը. Ծճմարիւտը ասեմ, թէպէտ դու ինձ պատիւ ես
անում, բայց ես ընտանիական գործերում չը կամ: Ես նրա
երեսը տեսնելու չեմ եկել: (Նայում է այս և այն կողմ):

Ներսէս, Սերոր, ես իմանում եմ դու ինչու ես եկել:

Սերորը. Իմանում ես, իմացիր:

Ներսէս. Դու է՞ն անպիտանին ես պտրում. Աստուծոյ
սիրոյն, թող մնա քո էդ մտադրութիւնդ: Մարդ սպանելը
դժուար բան չէ, ճճմարիտ է, դու կը սպանես նրան. բայց
սպանելով նրան, դու կը սպանես մեզ ամենքիս: Մէկ մաքիկ
տրա, ի՞նչ կը լինի էս խեղճերի զրութիւնը:

Սերորը. Ի՞նչ էք ուզում ինձանից, ի՞նչ էք ուզում ին-

ձանից: Դուք ուզում էք ամեն մի շունի ցած արարմունքը
առանց պատժի մնայ:

Ներսէս. Հանդարտ, նրանք կը լսեն:

Սերորը. Ես իմանալով եմ ձայնս գլխիս գցում, թող
թէ կուզ արարած աշխարհը լսի:

Ներսէս, Բայց մէկ մտածիր, թի՛ւ ենք մենք:

Սերորը. Ախ, ինչո՞ւ ես քեզ էգպէս քաշացնում ապեր,
հըմ, «թի՛ւ ենք մենք»:

Ներսէս Ի՞նչ է, դու կարծումես քո ասածներդ ես
չեմ հասկանում:

Սերորը. Տեսնում եմ: Քո սեփական մտիցդ քեզ խորո-
ված են ուտեցնում, իսկ դու լռում ես:

Ներսէս. Ի՞նչ անենք, աղքատութեան դէմ կռիւը թող-
նում է մեզ աչք բացել:

Սերորը. Սա է ձեր կռիւը:

Ներսէս. Ապա ի՞նչ է: Չար բախտի դէմ չե՞նք կռիւ
անում: Եթէ չ'անենք էդ կռիւը, չե՞ որ մեր ողջ ընտանիքը
կը ջնջուի աշխարհի երեսից: Սերոր հոգի՛ս, ի՞նչ անենք
որ փոքր ենք, բայց չե՞ որ մենք էլ մի տուն ենք, ինչո՞ւ
թողնենք, որ մարուսի մեր ճրագը:

Սերորը. Վայ է՞ն մարուսդ ճրագին, որ մեզ նմանների
իւզով պէտք է վառ մնայ:

Ներսէս. Մի ասիլ, նամուսով մարդը ինչպէս էլ լինի,
մի կտոր հաց կը ճարի իրա ընտանիքը պահելու համար:

Սերորը. Հաց, հաց. էդ մի կտոր հացը հօ շունն էլ է
ճարում:

Ներսէս. Եթէ դու էլ ինձ հետ մէջքմէջքի տուած լի-
նէիր, մեր զրութիւնը էս օրին չէր հասնիլ: Ես էլ հազիւ
վեր կենամ էս հիւանդութեան ձեռքից, իսկ դու չես խնայ-
ում մեր պատիւը:

Սերորը. Հըմ, ցեխի մէջ տրորուած մեր պատիւը:

Ներսէս. Ուրեմն ի՞նչ անենք:

Սերորը. Երկուսից մէկը պէտք է սպանուի ապեր:

Ներսէս. Ի՞նչ:

Սերորը. Երկուսից մէկը: Կամ պէտք է մորթել մէկին,
կամ շանսատակ անել է՞ն մէկին:

Ներսէս. Ինչե՞ր ես խօսում:

Սերորը. Էդ տեսակ կեղտը պէտք է արիւնով լուացուի:

Ներսէս. Ես քեզ ասում եմ խաղաղ ապրուստի մասին:
Սերոր. Իսկ ես քեզ ասում եմ, էդ տեսակ ապրելը
ցածութիւն է: Ինձ վրայ պէտք է ծիծաղեն, տնալ՝ անեն,
անունս կնիկ դնեն, իսկ ես ապրելի մասին մտածեմ: Չէ.
էդ մէկը Սերորը չի կարող: Նա չի կարող իրա անպա-
տուած քրոջ երեսին մտիկ անել: Նա յղամարդ է, գլխին
դգակ ունի դրած: Էգուցուայ օրը ուրիշները որ լսեն, մար-
դիս ճակատի մէջտեղին կը թքեն: Ինձ ստեղծողը ինձ մէկ
անլեզու անասուն չի ստեղծել: Էդ մէկը ապեր, խնդրում
եմ թող իմ հոգիիս պարտքը լինի:

Ներսէս. Ես նրանց համար եմ ասում, նրանք ապրել
են ուզում:

Սերոր. Սրանից յետոյ նրանք ապրել են ուզում:
Մահը հօ նրանց համար մին Աստծոյ ողորմութիւնն է: Թող
նա ապրի, որի համար փակ դուռ չը կայ, որի համար ցա-
ծութիւնը տղամարդութիւն է, որը (ցած) աչքիդ առաջ
քրոջդ պոռնիկ կոչեց: Ել ի՞նչ ես ուզում: Էդ անպատու-
թիւնից յետոյ դու գեռ ապրելու մասին ես խօսում: Չէ,
ապեր. բանտ շատ եմ նստել, բայց ոտքիս սակոռները քոր
են գալիս, պէտք է բրապիտներ հագնել և մին Սիբիրի
կողմերն էլ վիզիտ անել: Սերորի մեռած օրը պէտք է լինի,
որ նրանց տունը սուգի տուն չը շինի:

Ներսէս. (Թուլացած): Գլուխս կարծես մի դատարկ
տաքածութիւն լինի, չորս կողմից նրա պատերով թափոււմ
են եռ եկած կաթիլներ: Էս դարունը ինձ վախեցնում է
Սերոր: Քաղցր է կեանքը. ես ուզում եմ Սերոր, ներել
մարդկանց բոլոր մեղքերը, ես ուզում եմ ապրել...

Սերոր. Տայ Աստուած որ դու լաւանաս և ապրես ա-
պեր, իսկ ես, էհ... (Մտաւ Մինաս միջի դռնից)

Տ Ե Ս Ի Լ 6

Ներսէս, Սերոր և Մինաս

Մինաս. Բարի օր ձեզ:

Ներսէս. Բարով վարպետ:

Մինաս. Կարելի է հարցնել, ինչպէ՞ս է զգում իրան
Ներսէսը:

Սերոր. Համեցէք:

Մինաս. Դձ ևս ինձ համեցէք անում: Ուրեմն հաշ-
տուենք:

Սերոր. Ես քեզ հետ խոսով չեմ վարպետ:

Մինաս. Դէ, ձեռքդ: (Մեկնում է ձեռքը):

Սերոր. Բռնիր հիւանդի ձեռքը անշնորհք: Երևի նրա
համար ես եկել:

Մինաս. Ուղիղ ես հրամայում: (Բռնում է Ներսէսի ձեռքը):
Վարպետ Յակոբը ինձ ասաց, Ներսէսը մի քիչ իրան լաւ
չի զգում: Ուղիղը ասած, ես շուտ-շուտ կը դայի, բայց սրտ-
նից եմ քաշում. անհանդիստ աղայ է: Ինչպէ՞ս ես:

Ներսէս. Ես ինձ վստ եմ զգում:

Մինաս. Էստեղ շատ էլ լաւ չի քեզ համար, պէտք է
դնալ սենեակ:

Ներսէս. Էնտեղ էլ խոնաւութիւն կայ:

Մինաս. Հնար չը կայ Ներսէս, դու պէտք է ձեռք վեր
առնես էդ թամբաքուի ֆարքիկից:

Սերոր. Տօ խիլքի տոպրակ, էդ ճարիրը հօ ես էլ եմ
իմանում:

Մինաս. Ե՛կ ես քեզ մեր գիւղը հիւր տանեմ:

Սերոր. Իսկ ի՞նչ, անշնորհք, համեցէք չի՞ս անում:

Մինաս. Ես քեզ էլ եմ խնդրում:

Սերոր. Ի՞նչ ես ասում ապեր, չը գնանք:

Ներսէս. Շնորհակալ եմ վարպետ. դու ինքդ էլ իմա-
նում ես, որ մենք կարողութիւն չ'ունենք, էնպէս որ վար-
ձիդ մասին պէտք է ներես:

Մինաս. Երբ որ դուք ամենքդ մի օր զիւղում մեր
տան մէջ հացի նստած կը լինէք, էդ կը լինի իմ վարձը:

Ներսէս. Ինչքան էլ լինի վարպետ Մինաս, ապրուստը
գիւղում հօ ձրի չի:

Մինաս. Իհարկէ ձրի չի, բայց դէ էդքան էլ հօ թանգ չի:

Ներսէս. Ի՞նչ իրաւունքով քեզ նեղութիւն պատճա-
ռենք:

Մինաս. Վնաս չ'ունի, երբ որ կը հարստանաք, կը
վճարէք:

Սերոր. Տօ անշնորհք, էդ պայմանով ես հօ Պարիժ էլ
կը գնամ:

Մինաս. Բայց գիտե՞ս, մեր գիւղի օդը ինչ օդ է:

Սերոր. Ասում են զրախտը ձեր տան յատուկն է ե-
ղի և որ Ադամը ձեր հանդուժն է թաղուած:

Մինաս. Մէկ համեցէք մեր գինիի կարասները տեսէք, յետոյ կ'իտասենք: Ես քեզ պէս չեմ: Ես քեզ էնտեղ չեմ ա- սիլ թէ «էստեղ մէկը աւելորդ է»:

Սերոր. Ներքը վարպետ. անցած բան է: (Ձեռք է բռնում):

Ներսէս. Ախ ինչքան կ'ուրախանար հայրիկը, երբ էդ տեսնէր:

Մինաս. Դուք նրան մենակ միք թողնիլ փողոց. թէ չէ նա (ճակատի վրայ ցնորումով ցոյց տալով) մի քիչ փո- խուած է երևում:

Սերոր. Բանիդ կայ վարպետ. ծերերի վերջն է՝ կամ անդամաւոր ինչ կտրին, կամ խելքները տանու կը տան:

Մինաս. Սերոր ջան, դու մի քիչ ներողութիւն անես:

Սերոր. Երևի խոստովանք ունէք, համեցէք: (Գնաց աջ կողմ):

Տ Ե Ս Ի Լ 7

Ներսէս եւ Մինաս

Մինաս. Ներսէս ջան, ես քեզ մի բան եմ ասելու. բայց խօսք տուր, որ խօսքը մեր մէջ կը մնայ:

Ներսէս. Խօսք եմ տալիս, բայց չեմ երդում, որով- հետե կեանքումս սուտ ասած չը կամ:

Մինաս. Դիտե՛ս իմ միտքը ինչ է: Ես ուզում եմ տնաւորուեմ: Դու ինքդ էլ տեսնում ես, որ մեզ նման տնա- ւորութեան համար աղքատութեան քաղաք տեղում ինչքան է դժուարացիլ: Դէ Փառք Աստծոյ, էդ նոր-նոր ցաւերը հիմի գիւղերումն էլ է տարածուել: Դոխտուրները իհարկէ պատիւ չեն անում գիւղ գնալը, էնպէս որ մեզ համար էնտեղ մի կտոր հաց ճարելը դժուար չի լինիլ: Բայց իմ միտքս, ի՞նչ տեսիմ...

Ներսէս. Ասա վարպետ, մի քաշուիլ:

Մինաս. Ասե՛մ, լաւ. ասեմ: Ասա Ներսէս, ուղիւմ ես, որ մի նոր եղբայր էլ ունենաու:

Ներսէս. Մենք առանց էն էլ եղբայր ենք:

Մինաս. Հա, էդ մէկը էդպէս է: Բայց իմ միտքս ու- րիշ բան է: Ձեռք իմանում հասկանում ես, թէ չէ:

Ներսէս. Մի քիչ հասկանում եմ, բայց եթէ էլ պարզ ասես, աւելի լաւ կը հասկանամ:

Մինաս. Ինչպէս ասեմ... Ներքը եղբայր, մարդ ենք:

Ներսէս. Ոչինչ, ասա:

Մինաս. Եթէ քաղաքում մայր կամ քոյրս լինէր, բանը աւելի հեշտ կը լինէր, որովհետեւ իմ ասելիքս պէտք է կնիկարմատ ասէր: Վարպետ Յակոբը արդէն իմանում է, ես նրան ասել եմ: Ի՞նչ ծածկեմ քեզանից: Մի 2 անգամ տեսել եմ քրոջդ, վերջը, հաւանիլ եմ... սիրել եմ: Ես նը- րան ուզում եմ. կը տաք՝ լաւ, չէք տալ՝ էլի դուք իմը, ես ձերը:

Ներսէս. Եղբայր Մինաս, դու մեղանից ինչո՞վ ես պա- կաս, որ մենք «չէ» ասենք: Քեզանից լաւ տղի էինք տալու:

Մինաս. Ուրիմն էս էդպէս. սա վերջացաւ: Բայց ես էլի մի բան պէտք է ասեմ: Դուք չը կարծէք, թէ ես էս քաղաքումը ականջներիս բամբակ դրած եմ ման գալիս, որովհետեւ մի հանգամանք կայ, որի պատճառով դուք կարող էք մտքներովդ անց կանցնիլ, թէ երևի էս մարդը մի շատ միամիտ մարդ է և աշխարհից խելքը բան չի կտրում:

Ներսէս. Մե՞նք:

Մինաս. Դուք... Ինչպէ՞ս ասեմ: Դուք էլ բերանով ե- րեսիս չէք ասիլ, բայց մտքներովդ ամեն ժամանակ կ'անցնի: Ինչե՞նչ: Վարպետը ինձ համար շատ է պատմել Աստծոյ խօսքը... իմ արածը մի շատ ծանր բան է, դժուար բան է. (սաստիկ յուզւումով) հազարից մէկը չի անիլ էդ բանը... Եղբայր Ներսէս. ես ուզում եմ մին անմեղ հոգի ազատեմ: Ես ուզում եմ ազատել ձեր պատիւը, չէ, չէ, իմ պատիւը: Ձէ՛ որ նա էլ իմ հայ քրիստոնեայ քոյրս է: Ինչպէս կ'ու- ղես, էնպէս հասկացիր: Ես պրծայ:

Ներսէս. Մինաս ջան (ուզում է համբուրել նրա ձեռքը):

Մինաս. (Ձեռքը քաշելով): Ես կը սպասեմ պատաս- խանի:

Ներսէս. Ազնիւ տղայ... Ես խկոյն կ'յայտնեմ Սերո- րին: (Գնում է Սերորի գնացած կողմ):

Տ Ե Ս Ի Լ 8

Մինասս եւ Ալեքսանդր

Ալեքս. (Ձախ կողմից): Բարեկամ. դու իսկի բան-ման հասկանում ես. թէ հէնց իսկ են ասել, յիմար գիւղացի:

Մինասս. Ի՞նչ ես ուզում:

Ալեքս. Ես ասում եմ, դու իսկի բան-ման հասկանում ես:

Մինասս. Ես իմ հասկացածս ինձ համար շատ բաւական եմ համարում, և սրտնից աւելին չեմ էլ ուզում հասկանալ:

Ալեքս. Ես քեզ ասում եմ, գիտե՞ս ինչ աղջիկ են կապում գլխիդ:

Մինասս. Ոչ ով իմ գլխին աղջիկ չի կապում: Աղջիկը ես իմ կամքով եմ ուզել:

Ալեքս. Բայց ես ուզում եմ քո անքե բացեմ:

Մինասս. Իսկ ես քեզ ասում եմ բացիր դու քո անքե: Միթէ պարոն մի մեղք բան է, եթէ մարդ գայլի բերանից մի դառը ազատի:

Ալեքս. Ի՞նչ:

Մինասս. Հրամանեա, իսկ էնպէս, ինչպէս որ հրամանքդ հասկացաւ:

Ալեքս. Լսիր, իմ գլուխս այդպէս բաներ չի մտնում: Ես քեզ խորհուրդ եմ տալիս, քանի որ թեփուռդ ցրիւ չեն տուել, քո կամքովդ հեռացիր այստեղից:

Մինասս. Իմանում ես ինչ կայ պարոն: Բոլորովին էլ Աստծուն մոռանալ չի լինիլ: Ե՛կ, ես խնդրում եմ, եթէ հայ ես, քրիստոնեայ ես, արիւնհեղութիւնը հեռացրո՛ւ էս տեղիքից:

Ալեքս. Ես քեզ ասում եմ, քանի որ քուխդ ուսերիդ վրան է, էլ չը համարձակուես ոտք դնել այս կողմերը. թէ չէ գլխիդ մի խաղ խաղալ կը տամ, որ եկած ճանապարհդ կը մոռանաս:

Մինասս. Իսկ ես քեզ ասում եմ, անքե բաց և մարդիդ լաւ ճանաչիր: (Բռնում է նրա կռններից և ուժգին հրում յետ)...

Գնա, կորիր էստեղից:

Ալեքս. Ես քեզ ցոյց կը տամ: (Անյայտանում են ձախ կողմում):

Տ Ե Ս Ի Լ 9

Ներսէս եւ Սերոր

Ներսէս. (Գալիս են աջ կողմից): Սերոր, էլ իսկի չ'սես, թէ աշխարհը չորացել է, և մեզ համար մարդ չը կայ: Ա՛յ մարդ:

Սերոր. Ի՞նչ է ուզում էդ Լողմանը:

Ներսէս. Նա Մարթային է ուզում:

Սերոր. Դէ էլ ինչի՞ էք սպասում, տուէ՛ք տանի էլի:

Ներսէս. Ուրեմն դու համաձայն ես:

Սերոր. Ե՛ս, ժ ես սափրիչներին շատ եմ պատուում, որովհետեւ ինչ գոռոզ գլուխ ասես, որ չը խոնարհուի նըրանց մկրտաւ տակ: (Ծիծաղում են):

Տ Ե Ս Ի Լ 10

Ներսէս, Սերոր, Աննա եւ Մարթա,

Ներսէս. (Նրանք մտան աջ դռնից): Խօսիր մայրիկ. դու գիտես, թէ մենք ինչ էինք ուզում ասել:

Աննա. Մայրիկը ի՞նչ խօսի: Նրա բերանում լեզու է մնացել: Մայրիկը խօսելու շնորհքն էլ է կորցրել, խելքն էլ:

Սերոր. Ուրեմն ես կը խօսեմ: Լսիր Մարթա: Վարպետ Մինասը սիրահարուել է քո վրայ, — երևի իհարկէ նա լսել է քո աղամարդութիւններդ, — ի՞նչ ես հրամայում, ի՞նչ պատասխան տանք. ինքդ էլ լաւ ես իմանում, որ էլ էն տեղը չի, որ կտարատուես, նազ անես, ուսովդ «չեմ իմանում» անես, գլխովդ «կը մոռնամ»: Քեզ համար էլ էդ տեսակ ցերեմոնիաների ժամանակը անց է կացել: Բայց դատարաններում մին լաւ սովորութիւն կայ: Աշկարայ մարդոսպանին էլ հարցնում են, «վրդ ես առնում, որ մեղաւոր ես»: Իհարկէ, թր յիմարը կ'ասի, թէ վրդ է առնում: Քաղաքավարութիւնը պահանջում է, որ մենք էլ քեզ հարցնենք, Հաւան ես:

Ներսէս. Չէ Սերոր: Եղպէս չի: Մարթա ջան. մեր դէմքին, մեր լեզուին մի մտիկ անիլ: Մենք մեր սրտի խորքում էլի առաջուայ պէս սիրում ենք քեզ: Չը կարեհա,

որ դու մեր աչքում մի աւելորդ բան ես, որ մենք ուզում ենք դէն շարտել: Ձէ, Աստուած վկայ Մարթա, դու իմ աչքում էլի առաջուկայ իմ քոյրս ես: Մինասի մասին միայն սա կ'ասեմ, որ քո մասին մին էնպէս խօսք ասեց, որ ես ուղեցի նրա ոտքերը համբուրել... Մնացածը դու ես իմանում: Մի քաշուիլ, կ'ուզես՝ «այո» ասան, կ'ուզես՝ «ոչ»:

Աննա. Խօսի՛ր էլի. ինչո՞ւ է լեզուդ քարին կապին դէմ ընկել: Ինչո՞ւ ես պապանձուել, ասան որ չես ուզում:

Սերոր. Սպասեցէք: Ես չեմ ուզում, որ նա իրա երեսը իմ մօտս բացի: (Ծածուկ ներսէսին): Փողերիս գլուխը քոր է գալիս: Դու տեսնում ես, որ նա համաձայն է. ես դնամ պատրաստութիւն տեսնեմ (Գնաց միջի դռնով):

Ներսէս. Բացի՛ր սիրտդ մայրիկի առաջ: (Գնում է աջ):

Տ Ե Ս Ի Լ 11

Աննա եւ Մարթա

Մարթա. Մայրիկ, ինչո՞ւ էք ինձ մորթում:

Աննա. Դու ինքդ ես մեզ առանց դանակ մորթել, մե՞զ ես առում:

Մարթա. Ինչո՞ւ ինձ գոնէ մի անգամ չ'ասացիր, որ մորդիկ սուտ ասող են լինում, երդումը ցեխի մէջ զցող: Ինչո՞ւ թողիր որ ես մոլորուեմ:

Աննա. Գիշեր ցերեկ քեզ չէ՛ր ասում:

Մարթա. Ապա ինչո՞ւ էիք թողնում. որ էն շունը ոտք դնի մեր տան մէջ: Ես յիմարացայ, ես խաբուեցի նրա լեզուին, ես կարծեցի, նա ինձ կը բախտաւորեցնի: Ես լի՛նջ իմանայի, որ մինչ էդ աստիճան կարելի է չը խղճով մարդուն: Ախ ինչպէս մարդիկ չեն վախենում Աստուածանից: Բաւական չէ որ նա ինձ խաբեց, հիմի էլ դուք էք ուզում մի ուրիշին խաբել:

Աննա. Խաբե՞լ,

Մարթա. Կարելի՞ է, որ նա ոչինչ լսած չը լինի:

Աննա. Ես լի՛նջ իմանամ լսել է, թէ չէ:

Մարթա. Ապա ես լի՛նջ սրտով գնամ նրան, եթէ նա չի իմանում: Եւ լի՛նջ աչքով պէտք է մտիկ անեմ նրան, եթէ նա յետոյ իմանայ:

Աննա. Տանջանք է էլի:

Մարթա. Եթէ մեղք չը լինէր, վաղուց ես վերջ դրած կը լինէի իմ կեանքիս: Կրակի մէջ էրեւում եմ մայրիկ: Գիշեր ցերեկ ես Աստծուն խնդրում եմ ինձ ների: Բայց եթէ դուք չէք ներում, որտեղից նա ինձ կը ների: Գոնէ դու ինձ ներիր, մայրիկ, ախր չէ՞ որ դու առաջ ինձ սիրում էիր: Մի՞թէ յաւիտենական ընկա՞յ ես քո աչքում:

Աննա. Թող Աստուած ների քեզ... ես լի՛նջ ասեմ: Ինչ կրակ մաղուց իմ գլխիս: Բո անբախտութիւնը լեզուս կապեց, սպանեց ինձ... ախր չէ՞ որ ամենքիս ուրախութիւնը մենակ դու էիր, իմ խեղճ երեխայ:

Մարթա. Կարգադրեցէք իմ վիճակը և ո՞ւմ ուզում էք տուէք, միայն թէ նա իմանայ, որ ես մի անպորձ երեխայ եմ եղել, մոլորուել եմ, յխալուել եմ, թող առաջ նա ինձ ների, յետոյ ինքը գիտէ: Եթէ նրան էլ արժանի չ'եղայ, զցեցէք ինձ տան մի անկիւն, կապեցէք երեսիս դուռը, թող էնտեղ կծկուեմ և մինչև կեանքիս վերջը քաւեմ իմ մեղքը: Երևի իմ անբախտ ճակատիս էդ էր գրած:

Աննա. Ձէ, չէ: Էդպէս մի ասի: Գոնէ դու ապրիր և օր տես: Մենք մի բախտաւոր օր չենք տեսել Աստծոյ երկնքի տակ: Ոչ մի մարդ մեր նեղութիւնումը մեր դուռը չի ձեծել, մեզ չի հարցրել: Էդ խեղճ տղան է, որ մի քիչ մեզ ձեռք է բռնել: Կարելի է նրա հետ դու աւելի բախտաւոր ես լինելու... չէ՞ որ հայրդ ասում է, որ նա մի բարի տղայ է:

Մարթա. Եթէ նա բարի կը լինի և յետոյ, ես ամեն կերպ կ'աշխատեմ, որ նա բախտաւոր լինի:

Աննա. Աստուած տո՛յ, որ դուք բախտաւոր լինէք որդի:

Մարթա. Միայն թէ թող նա ինձ տանի, հեռացնի էստեղից... որ ամեն ինչ մոռացուի: Ախ ինչքան եմ դաւնացրել ձեր օրերը: Դէ գոնէ հիմի, թող մէկ լսեմ քո քաղցր բերանից իմ անունը:

Աննա. Մարթա, Մարթա: (Փաթաթւում են): Շատ արտասուք թափելուց աչքերս են բոռացել:

Տ Ե Ս Ի Լ 12

Մարթա, Աննա, Ներսէս եւ Մինաս

Ներսէս. (Մտնում են աջից): Հա, էդ լաւ է: Արտա-
սուքը շատ ցաւեր է լուանում:

Աննա. Նա համաձայն է:

Ներսէս. Աստուած քեզ նրա հետ բախտաւոր անի,
քոյրս: (Գանչում է): Վարպետ Մինաս: (Հաղում է սիրտը
բռնելով):

Մինաս. (Ձախից): Ես էնքան էլ հեռու չէի. ինչո՞ւ նե-
ղութիւն տուիր քեզ:

Ներսէս. Ոչինչ... անցաւ Հիմի խօսելու հերթը քոնն է:

Մինաս. Մինչ էսօր ես քեզ մօր տեղ եմ հաշուել, էս-
օրուանից էլ դժու ինձ քո սրգիւղ հաշւիր: Իսկ քեզ, իմ հայ
բրիտանացի քոյր. ի՞նչ ասեմ, իմ բախտիս՝ Աստուած քեզ
է նշանակել, քո բախտիդ՝ ինձ: Աշխարհք է, ի՞նչ պէտք է
անես: Էսպէս էլ է լինում, էնպէս էլ: Է՛հ փառք Աստծոյ:
Վարպետ Յակոբի աղջիկ, յոյս ունեմ էլ չ'ասես, թէ անի-
րեսի մէկն եմ, մտել եմ էնտեղ, որտեղ ինձ համեցէք չին
արել:

Ներսէս. Հա հա հա... էդ ի՞նչ ուր բան է: (Հաղում է):

Մինաս. Ձէ, էլ չը խօսես Ներսէս... փխտում է քեզ
(Նստեցրեց մահճակալի վրայ):

Տ Ե Ս Ի Լ 13

Աննա, Մարթա, Ներսէս, Մինաս եւ Սերոր

Սերոր. (Միջի դռնով): Կարծեմ արդէն կ'աւելի է շնոր-
հաւորել: (Հանում է զանազան գրախանութից օղի): Սա փորա-
ցաւի ճար, (գլինի) սա գլխացաւի (յետոյ բաժակներ, հաց,
պանիր և այլն): Դէ մայրիկ (ածում է գլինին և տալիս): Այդա
մի օրհնիր: Էն ինչպէ՞ս են ասում «օրհնեմ օրհնեմ զօրա-
նաս, կանանչես չը չորանաս, գինի խմես քուռանաս»...

Աննա. Ողորմած Աստուածը լսի իմ մեղաւոր բերա-
նիս օրհնանքը: Վատ օր չը տեսնէք, սիրով ձերանաք:
(Խմում է գլինին):

Սերոր. (Լրացնելով նրա ասածը): Մի բարձի տիրանաք,
հ'մ: Անո՞յ: Դէ վարպետ, տեսնեմ դժու ինչպէս ես սիրում
նշանածիդ: (Ածում և տալիս է նրան գլինին):

Մինաս. Լաւ ձեռքի է:

Սերոր. Բռնիր ասում եմ (Մինասը բռնելուս, յետ է
քաշում, ուզում է խմել, նորից տալիս է նրան): Ձէ վարպետ,
ես սրանում չը կամ, բռնիր: Իմը էդ առիւծի կաթն է: (Տա-
լիս է նրան գլինին, իրա համար ածում է օղի): Դէ Աստուած
շնորհաւոր արասցէ: Եթէ ուզում ես հարսնացուդ քեզ շատ
սիրի, լաւ քամիր: (Խմեց):

Մինաս. Կենացդ վարպետի աղջիկ: (Խմեց)

Սերոր. Մինչև տակը, մինչև տակը: Այ էդպէս: (Ածում
է գլինի և տալիս է Ներսէսին): Խմիր ապեր, սա ամեն հիւսն-
դութիւնների ճար է, օձի կծածից մինչև մարդի կծածը:

Մինաս. Նրան ո՞չ թէ խմելը, խօսելն էլ է փխտ:

Սերոր. Ոչինչ, ես կը խօսեմ նրա տեղ. «Սերոր, յետ
դառ վատ ճանապարհից և լաւ մարդ դնա՞ւ: Շատ լաւ ա-
պեր: Ասենք թէ էսօրուանից խօսք տուի ես էլ լաւ մարդ
դառնամ: Բայց չէ՞ որ էստեղումս (սրտում) կայ մի ցաւ,
մարդուն խելքից հանող մի ցաւ: Նա չի թողնում ինձ, որ
ես էլ հաշտ աչքով մտիկ անեմ աշխարհիս չարութիւններին,
նա չի թողնում, որ ես էլ կեղծ ժպտամ, սողամ փորիս
վրայ և լիւրեմ ինձ կոխ տունդ ոտքերը: Շատ անգամ մտա-
ծում եմ, «քեզ ի՞նչ, որ աշխարհքը լի է անարդարութիւնով
և զրկանքներով»: Բայց չի՞ լինում. նա զարթնում է և ա-
սում՝ գլուխդ բարձր բռնիր, աչքերդ համարձակ, կուրծքդ
հպարտ: Տո՛ւր, խփիր, ջարդիր, քեզ հանգստութիւն չը կայ:
Եթէ դուք ապեր, կարողացաք էդ փոքրիկ սատանայի գլուխը
ջարդել էս տեղում, եթէ դուք ինձ կարողացաք բժշկել էդ
ցաւից, ես էլ խօսք եմ տալիս ձեզ լաւ մարդ դառնալ:
(Խմեց):

Տ Ե Ս Ի Լ 14

Աննա, Մարթա, Սերոր, Ներսէս, Մինաս, եւ Յակոբ

Յակոբ. (Առջ քնմի ետեից լսուեց նրա հառաչանքը
«անհ, անհ», յետոյ նա մտաւ սև վերաբուրի վերի կոճակները բաց,
փռի մէջ կտրած, գլխարաց և մազերը բլբլուած): Մարթա,

Իմ Մարթա: Ես տեսայ նրա հօրը, նա փողոցի մէջտեղով անցնում էր կառքի մէջ: Ես վազեցի նրա վրայ. բռնեցի կառքից և ասացի. Յիսուսի անունով ասում եմ քեզ, կանգնիր, յետ ասել ինձ իմ ընտանիքի պատիւը: Իսկ նա ոտքով խփեց կրծքիս, «խեղճից ցնորուած է» ասաց, գցեց ինձ հողերի մէջ, քշել տուաւ առաջ:

Աննա. Ի՞նչ է պատահել քեզ, խեղճ մարդ, ռւբ է գլուխդ:

Յակոբ. (Կնոջը): Ես նրան մի վատ բան չ'ասացի, Անոյշ ջան. ի՞նչ իրաւունքով խփեց նա ինձ: Մեղաւորը նրա որդին է... ևս ի՞նչ եմ արել նրան: Ես կանչեցի իմ Տէր Յիսուսիս, բայց նա չ'եկաւ ինձ օգնութեան, երևի հաւատը մեռած է իմ մէջ:

Սերոր. Ես կը գամ քեզ օգնութեան, ևս. էդ բանը նրանց էժան չի նստիլ:

Յակոբ. Դու էլի եկել ես: Կորիւր, մի երեւալ իմ աչքիս: Իմ որդին Ներսէսն է: (Համբուրում է նրան): Դու իմ սիրելիս ինչպէս ես հիմայ:

Ներսէս. Սիրիւր և նրան. նա խօսք է տալիս լաւ մարդ գառնայ:

Յակոբ. Հա՛: Աստուած ներէ քեզ... չէ՞ որ դու էլ (համբուրում է Սերորին)... իմ արիւնս ես:

Սերոր. (Աչքերը սրբելով): Է՛հ... Հիմ կարող տանել էդ վիրաւորանքը, պէտք է վերջացնել: (Դնաց ձախ):

Տ Ե Ս Ի Լ 15

Աննա, Մարթա, Ներսէս, Մինաս և Յակոբ

Մինաս. Ինձ չէ՞ս ճանաչում վարպետ:

Յակոբ. Հա հա հա: Սա աղքատներին լաւացնում է, բայց փող չի վերցնում. ասում է «մնա, երբ հարստանաք, կը վճարէք»: Ապա ինչո՞ւ չես կարողանում սրան լաւացնել: Ախր չէ՞ որ սա է իմ տան սիրնը. չէ՞ որ սա պէտք է վառ պահէ իմ տան կրակը, էս մարդուդ ճրագը:

Մինաս. Նա կը լաւանայ. Աստուած ողորմած է: Էգուց մենք ճանապարհուում ենք գիւղ:

Յակոբ. Հա: Տար նրան, լաւ մտիկ արա՛, լաւացրո՛ւ նրան, թէ չէ նա էստեղ կը մեռնի, չի ապրիլ: (Յանկարծ

ղրա դէմքը փայլում է և որպէս թէ ծիծաղելով): Բայց մտիկ արա՛, եթէ նա մեռնի, չը գնա, ինձ չ'ասես «Աստուածանով մխիթարուես, ծերունի»: Ձէ չէ: Ինձ ի՞նչ, թէ նա կը մեռնի: Դու գնա մխիթարութիւնը Նրան ասա՛: Ինձ ի՞նչ: Հմ, Նրանն էր, Նրանն էլ դառաւ: Ես որդի չ'ունեմ: Ես ինքս որդին եմ իմ Տէր Յիսուսի: Աղօթք անենք:

Մինաս. Ձէ վարպետ սպասիր:

Ներսէս. Հայրիկ ես իմ աչքով ուզում եմ տեսնել: Օրհնիր: Մինասը արդէն մեր Մարթայի նշանածն է:

Յակոբ. Ճշմարիտ է: Ուրեմն դուք լսեցի՞ք խեղճ ծերուկիս խօսքը (Մարթա և Մինաս մօտենում են): Անոյշ-ջան. օրհնենք նրանց:

Ներսէս. Ախ Աստուած, ա՛: (Բռնում է սիրտը և թաշկինակով բերանը):

Աննա. (Յանկարծ): Երեխաս ձեռքից գնաց:

Մինաս. Ոչինչ. մի վախէք: Էստեղ ցուրտ է, պէտք է նրան տանել ներս: (Օգնում է նրան):

Յակոբ. Մի թողնէք, երեխան մըսում է: Տարէք ներս: (Մինաս և Մարթա տանում են Ներսէսին, որի ձեռքում նկատւում է սաստիկ արիւնոտ թաշկինակ: Աննան դռն մօտ հեծկըլտում է): Աննա դու լա՞ց ես լինում: Ասա օրհնեալ լինի Աստծոյ կամբը:

Աննա. (Լացով)... Օրհնեալ լինի Աստծոյ կամբը:

Յակոբ. Հա. էդ լաւ է: Օրհնեալ լինի Աստծոյ կամբը:

Տ Ե Ս Ի Լ 16
7/11 1922
Յակոբ, Աննա և Սերոր

(Բեմի ետևից լսում է Ալեքսանդրի ձայնը) «Ես երբ ասում եմ բաց թող ինձ... սրիկայ»: (Սերորի ձայնը). «Մեղիք չուն շան որդի»: (Ալեքսանդրի ձայնը): Ա, օղնեցէք... ա՛: (Սերորը մանում է ձախից, արիւնոտ դաշոյնը ձեռին):

Աննա. Տէր Աստուած, էդ ի՞նչ է, ի՞նչ է պատահել:

Սերոր. Ոչինչ, ես մաքրեցի մեր տան պատիւը:

Յակոբ. (Որպէս թէ չըմբռնելով իր շուրջը կատարուածը). Աղօթք անենք... (չօքում է) աղօթք անենք:

Այս ձայների վրայ Մինաս և Մարթա աչքերը բռնած յայտնում են աջ դռան մէջ: Պատկեր. վարազոյրը հանդարտ ինջնում է:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.

Հեղինակի իրաւունքի նկատմամբ զանազան թիւ-
րիմացութիւններ չեն եղած համար յիշեցնում
ենք պ.պ. ներկայացնողներին, որ իւրաքանչիւր ան-
գամ մեր այս պիեսը բեմ հանելիս, իբր հօնարար, հե-
ղինակին պէտք է փոխադրել 5 ըուբլի նահանգական՝
3 ըուբլի գաւառական քաղաքներից:

ՀԵՂԻՆԱԿ:



Վ Ա Ճ Ա Ռ Վ Ո Ւ Մ Ե Ն

Հ Ե Ղ Ի Ն Ա Կ Ի

Մկիճի հարսանիքը ֆարս մի դարձ. II տպ.	. 20	կ.
Նաֆթի ֆանտազի » » » » »	. 10	կ.
Խեղագար Մինա » » » . . .	. 20	կ.
Անկոչ հիւր » » » . . .	. 25	կ.
Պօէտի երազը » » » . . .	. 20	կ.
Գիւղի վարժապետ » 2 » . . .	. 30	կ.
Էքսպրօպրիացիայ » 3 պատ. . .	. 20	կ.
Նշանուածներ պիես 3 արարուածով . . .	. 60	կ.
Մարուող ճրագներ պիես 3 արարուած. II տպ.	. 60	կ.

Պակետը՝ Тифлисъ, Гуттенбергъ.

Тифлисъ, Центральн. книж. торговля.

Баку, Сотрудникъ.

Ն Ա Ր Ի Ն Ա Ռ Վ Ո Ւ Մ Ե Ն

Лига свободной мысли пьеса въ 4 д.	. 2	р.
Сила убѣжденія пьеса въ 3 д.	. 2	р.

Սրանց պակետը՝ С.-Петербургъ, «Театръ и Искусство».

Сонъ поэта фарсъ въ 1 д.

Դրանի՝ С.-Петербургъ, Ком. отд. Союза Драм. писателей, Никол., 20.

Հեղինակի հասցեն՝ Нахичевань н-Д. Ал. Абелянъ

ՀՀ Ազգային գրադարան



NL0322583

16.670